
A Treasury
Ոսկեփորիկ
of Armenian Chants



Compiled and annotated by
Şahan Arzruni

M
S
4

A Treasury of Armenian Chants

In memory of Edward D. Jamie (Jamakordzian)
and Nubar G. Arifian for their love of children and music.

A Treasury of Armenian Chants

Compiled and annotated by
Şahan Arzruni

St. Vartan Press
A publication of the Department of Religious Education
Eastern Diocese of the Armenian Church of America
630 Second Avenue
New York, New York 10016

Cover and book design by Arpie Gennetian

Sponsored by the Association of Armenian Church Choirs of America
through the gracious support of Mrs. Lucy Jamie-Bongarzone and Edward & Lynn Jamie.



By order of His Eminence Archbishop Khajag Barsamian

Copyright ©1994 Diocese of the Armenian Church and Şahan Arzruni
A Treasury of Armenian chants = [Oskep'orik] /
[compiled by Sahan Arzruni. 1 score.
Principally hymns; includes some secular songs.
For voice and keyboard.
Words in Armenian (Armenian script and Roman alphabet)
with English prose translation; historical and biographical
commentary in English with Armenian translation.
Includes bibliographical references.
ISBN 0-934728-26-7
1. Hymns, Armenian. 2. Armenian Church — Hymns.
3. Chants (Armenian). 4. Songs, Armenian. I. Arzruni, Şahan. II.
Title: Oskep'orik.
M2132.A6T74 1994 94-29617
CIP
M

The idea for this hymnal was born more than ten years ago out of the need for children as well as adults to understand and sing together the sacred songs of their people. There was no song book we could open as a church family that would make our hymns intelligible to new generations of faithful. In most cases, there was no modern musical notation available. The then Primate and now Patriarch of Jerusalem and Locum Tenens of the Holy See at Etchmiadzin, His Beatitude Archbishop Torkom Manoogian helped launch this project by setting a lone vartabed to work painstakingly setting down music by hand, note by note. The hymnal was so long in securing funding that this process became obsolete and was replaced by the computer (much to the vartabed's relief, no doubt). We were able to continue with the blessings of the current Primate, His Eminence Archbishop Khajag Barsamian, and fortunate to find a true musician and creative force in Sahan Arzruni whose work in making these songs singable and in recreating their history and milieu is nothing short of miraculous.

It was his thought to accompany the hymnal with a cassette, an idea not only educationally sound but also responsive to the needs of many of our teachers and church families who, unfamiliar with most of our sacred music, had been asking for a tape of such selections.

Sahan went to Yerevan and personally recorded a children's chorus assembled by His Eminence Archbishop Garegin Nersisyan, Primate of the Diocese of Ararat. What that heroic chorus achieved is surely another miracle, its youthful members coming from distant villages by any means available - often by foot - and rehearsing for only a few short weeks with little more to support their efforts than their own sheer joy.

This is the result of such efforts, a treasury that is an esthetic delight even as it carries out the mission of the Department of Religious Education: to teach, inspire, and cultivate a living faith.

A Treasury of Armenian Chants is a gift from the DRE, the author, the benefactors, the designer, the children's chorus of Armenia, and from the ancient Church of Armenia itself, whose voices, present and past, echo in its pages. But most of all, it is a gift from God - who made us, brought us into new life in Jesus Christ, and who dwells in us as Spirit to the end of time.

And it is our gift to Him: "Sing to the Lord a new song!... Let everything that breathes praise the Lord!" (Psalms 149,150)

Elise Antreassian, Co-Director
Department of Religious Education

The nature of the Association of Armenian Church Choirs of America and its objectives clearly point to the support of activities which encourage and further the advancement of Armenian sacred music.

And so it was, as preparations were under way by the Department of Religious Education for a much-needed hymnal for the children of our Diocesan Sunday Schools, that the Central Council of the Choir Association accepted, in principle, the suggestion of the DRE to sponsor this publication with them. The Central Council had the expressed approval and support of our Diocesan Primate, His Eminence Archbishop Khajag Barsamian, in this endeavor.

In answer to a prayer and an appeal, the Jamie family of the Holy Martyrs parish of Bayside, New York, came forth with their generous contribution in underwriting the publication costs of this hymnal. Our heartfelt gratitude goes out to Mrs. Lucy Jamie-Bongarzone and Mr. & Mrs. Edward D. Jamie Jr. for their princely gesture.

Mary Selvinazian, Chair
AACCA

Table of Contents

Introduction

Canonical Hymns 1

Zanjaŕeli looso mayr Ձանճաւելի լուսոյ մայր *[Christmas Eve Hymn]* 4
Khorhoort medz Խորհուրդ մեծ *[Christmas Day Hymn]* 7
Ov zarmanali Ո՛վ զարմանալի *[Hymn for the Blessing of the Water]* 11
Norahrash bsagavor Նորահրաշ պսակաւոր *[Hymn for the Feast of Vartanantz]* 14
Pann vor unt Hor Բանն որ ընդ Հօր *[Carnival Day Hymn]* 17
Aysor unt hragerbyan Այսօր ընդ հրակերպեան *[Palm Sunday Hymn]* 19
Nayyats sirov Նայեաց սիրով *[Vigil Hymn]* 22
Harevelits Յարեւելից *[Sunrise Hymn]* 25
Tsoghya his Ցօղեա՛ յիս *[Hymn for the Washing of the Feet]* 28
Aysor anjaŕ Այսօր անճառ *[Passion Hymn]* 30
Haryav Krisdos Յարեա՛ւ Քրիստոս *[Easter Eve Hymn]* 33
Aysor haryav Այսօր յարեաւ *[Easter Day Hymn]* 37
Hampartsav Dern mer Համբարձաւ Տէրն մեր *[Ascension Hymn]* 42
Aŕakelo aghavno Առաքելոյ աղաւնոյ *[Hymn of Pentecost]* 46
Vor i lerinn aylagerbyal Որ ի լերինն այլակերպեալ *[Hymn of the Transfiguration]* 49
Vork zartaretsin Որք զարդարեցին *[Hymn for the Holy Translators]* 57
Ov kerahrash dzaghig Ո՛վ գերահրաշ ծաղիկ *[Hymn of the Assumption]* 54
Zorootyoon soorp khachi Զօրութիւն սուրբ խաչի *[Hymn of the Exaltation]* 56
Kez Krisdosi gatooghige Քեզ Քրիստոսի կաթուղիկէ *[Hymn of the Cross of Varak]* 58
Aysor khntri Այսօր խնդրի *[Hymn for the Discovery of the Cross]* 60
Hrashapaŕ Հրաշափառ *[Hymn of Greeting]* 63
Amen Hayi srditz pkhadz Ամէն Հայի սրտից բխած *[Pontifical Hymn]* 67
Looys i looso Լոյս ի լուսոյ *[Baptismal Hymn]* 70
Oorakh ler Ուրախ լե՛ր *[Wedding Hymn]* 73
Kahanayk Քահանայք *[Requiem Hymn]* 77
Kta, Der Գթա՛, Տէր *[Martyrs Day Hymn]* 80
Aŕavod looso Առաւոտ լուսոյ *[Nocturnal Hymn]* 83

Divine Liturgy 85

Khorhoort khorin Խորհուրդ խորին *[Hymn of Vesting]* 87
Soorp Asdvadz Սուրբ Աստուած *[Trisagion]* 90
Havadamk Հաւատամք *[The Nicene Creed]* 92
Marmin deroonagan Մարմին տէրունական *[Hymn of the Great Entrance]* 105
Krisdos i mech mer Քրիստոս ի մէջ մեր *[Hymn of the Kiss of Peace]* 108
Soorp, soorp Սուրբ, սուրբ *[Anamnesis]* 111
Hayr mer Հայր մեր *[The Lord's Prayer]* • *Ekmalian* 114
Hayr mer Հայր մեր *[The Lord's Prayer]* • *Komitas* 117
Der voghormia Տէր, ողորմեա՛ *[Chant of Supplication]* 120
Krisdos badarakyal Քրիստոս պատարագեալ *[Hymn of Communion]* 122
Kohanamk Գոհանամք *[Song of Thanksgiving]* 126
Yeghitsi Եղիցի *[Psalm of Blessing]* 128

Occasional Songs 131

Mer Hayrenik **Մեր հայրենիք** *[National Anthem]* 133

Kach dohmi zavagner **Քաչ տոհմի զաւակներ** *[Song of the Brave]* 135

Lebho, le, le **Լեռնիս, լէ, լէ** *[Love Song]* 138

Der, getso too zHays **Տէր, կեցո՛ դու զՀայս** *[Hymn of Blessing]* 141

Ov medzaskanch **Ո՛վ մեծասքանչ** *[Ode to the Mother Tongue]* 144

En ardzivu cher **Էն արծիւը չէր** *[Song of Valor]* 148

Ambi dagitz **Ամպի տակից** *[Song of Lament]* 152

Oror **Օրօր** *[Lullaby]* 154

Seghani yerk **Սեղանի երգ** *[Festival Song]* 157

Dle, dle **Տլէ, տլէ** *[Folk Tune]* 161

Togh hnchen **Թո՛ղ հնչեն** *[Song of Faith]* 165

Bibliography 168

Pronunciation Key

a	*a*rt
e	*e*bb
ch	*ch*urch
dz	frien*ds*
g	*g*ive
gh	*r*ouge (in French)
i	*i*f
j	*j*ust
jh	vi*s*ion
kh	a*ch* (in German)
o	f*o*r
oo	*oo*ze
sh	*sh*oe
r	*r*apido (in Spanish, with a flip)
ts	ca*ts*
u	*a*lone

Introduction

This endeavor is an expression of profound respect for tradition. A strong tradition identifies a culture; a living tradition nurtures it. A tradition sustains a people related by common descent irrespective of the constancy of change.

A Treasury of Armenian Chants is about our musical tradition. It strives to relate the cultural significance of sacred music. It aspires to create relevance among the younger members of our community. It asserts such musical tradition to be the basis of our traditional music.

The selection of liturgical chants has been accomplished through pedagogical considerations; only hymns that are simple and concise have been included. These melodies are also tied in with feast days and other significant events in the religious calendar. I have eliminated the use of key signatures, time signatures, and bar lines to emphasize the non-Western nature of traditional Armenian music. Armenian sacred melodies are not created in major or minor tonalities, nor do they follow a prescribed metric organization. They evince melodic and rhythmic patterns that are related to the nature of the music and the text internally.

A keyboard part, composed especially for this purpose, is provided to facilitate the learning process only, for the concept of harmonization is alien to traditional Armenian music. This arrangement is meant to support the melody rather than enhance it. Its elements derive from the vocal line and are designed to avoid the sensation of chordal progression. In performance, the keyboard part should be relegated to a background function.

In addition to the liturgical chants, a small number of secular songs are added to introduce the names of established Armenian composers. Here the piano part is simplified for greater access. A cassette tape has also been prepared to provide an aural counterpart.

When I was compiling the material, the research on the headnotes was the most exciting challenge. In fact, it was a veritable education. His Eminence Archbishop Khajag Barsamian, Primate of the Eastern Diocese of the Armenian Church, spent many hours guiding me with his wise counsel. Equally indispensable was the input of His Eminence Archbishop Mesrob Ashjian, who supplied me with much valuable information.

The project was an arduous task. When Elise Antreassian, Co-Director of the Department of Religious Education of the Diocese, approached me with the idea of putting together a book of *sharagan*, little did I realize how expansive the field was and how unprepared I was to walk through it. I am glad she did not give up on me.

Without the aid of a number of friends and colleagues, I know I would have been unable to conclude this work. The Very Reverend Father Krikor Maksoudian patiently explained the finer points of the Liturgy and language. The Reverend Father Garabed Kochakian checked the text for doctrinal accuracy. The Very Reverend Father Souren Chinchinian made the initial preparation of the Armenian text. The Reverend Father James Doyle supplied the English translation of the *sharagan* text, while Jack Antreassian provided the English version of the secular poems. Finally, Hagop Kalfayan suggested the initial list of appropriate liturgical chants. I thank them all.

The work on this book has been a source of unbridled joy for me. As a result, I read more about Armenian civilization, I learned further, I reflected deeper. I also felt that the holy spirit of Komitas, who recreated, renovated and, above all, respected Armenian music, would have approved of this project.

Şahan Arzruni
In memory of my grandmother, Dikranuhi Kalpakian,
who instilled in me a sense of tradition.

Նախաբան

Այս աշխատասիրութիւնը աւանդութեան հանդէպ յարգանքի խոր արտայայտութիւն մըն է: Հզօր աւանդութիւն մը մշակութային ինքնութիւն կը բնորոշէ. ապրող աւանդութիւն մը այդ մշակոյթին կենսատու աւիշը կը դառնայ: Աւանդութիւնը որպէս ներգործիչ ոյժ, հակառակ դարերու յարաշարժ փոփոխութեան, նոյն ծագումը ունեցող մարդոց կու տայ ընկերութեան տեւականութեան գաղափարը:

Ոսկեփորիկ հատորը ի մասնաւորի մեր երաժշտական աւանդութեան մասին է: Ան կը ձգտի վեր հանել սրբազան երաժշտութեան մշակութային նշանակութիւնը: Ան կ'առաջադրէ զարթնեցնել երիտասարդ սերունդին շահագրգռութիւնը: Ան կը ջանայ ցոյց տալ, որ երաժշտական այս աւանդութիւնը հիմք կը կազմէ հայկական աւանդական երաժշտութեան:

Ծիսական երգերու ընտրութիւնը կատարած եմ մանկավարժական նկատումներով՝ եղանակները պահելով զուսպ եւ պարզ: Այս մեղեդիները նաեւ առընչուած են կրօնական օրացոյցին մէջ յիշուած տօնական եւ այլ նշանակալից օրերուն հետ: Հոս զանց առնուած են ձայնաշարի եւ համրանքի բանալիները, ինչպէս եւ տրոհակի գործածութիւնը, շեշտելու համար հայկական երաժշտութեան աւանդական բնոյթը: Մեր սրբազան մեղեդիները ո՛չ ձայնաշարային բանաձեւերու, ո՛չ ալ համրանքի պարտադիր տարազներու կը յարմարին: Անոնք կը յայնտաբերեն մեղեդային եւ կշռութային ձեւեր, որոնք սերտօրէն կապուած են եղանակներու եւ բառերու ներքին կառուցումին հետ:

Երգեհոնի եւ կամ դաշնամուրի բաժինը, որ ինքնատիպ յօրինում մըն է, հայթայթուած է միայն երգերու սովորումը դիւրացնելու մտահոգութեամբ, քանի որ դաշնաւորելու արուեստը մեր աւանդական երաժշտութեան համար օտար գաղափար մըն է: Աստ, ընկերակցութիւնը նպատակ ունի մեղեդիին օժանդակելու քան թէ անիկա զօրացնելու: Անոր տարրերը զօդուած են եղանակին հետ, խուսափելով դաշներու շարայարումի մը տպաւորութիւնը ձգելէ: Կատարումի ընթացքին, այս բաժինը երկրորդական դիրք պէտք է խաղայ:

Ծիսական մեղեդիներու առընթեր ստուար թիւով աշխարհիկ երգերու ալ տեղ տրուած է՝ ակնառու հայ երաժիշտներու անունները ծանօթացնելու ցանկութեամբ: Այս պարագային, գործիքային բաժինը պարզացուած է անոր կատարումը դիւրացնելու նպատակով: Վերջապէս, բոլոր երգերը ձայնագրուած են ձայներեզի վրայ, հեշտացնելու համար անոնց սովորումը:

Այս ձեռնարկի պատրաստութեան ատեն, ծանօթագրութիւններու մասին կատարած աշխատութիւնս կարծես ամենաշահեկանը եղաւ. իսկական ուսում մըն էր ան: Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հիւսիսային Ամերիկայի

արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան անհամար ժամեր տրամադրեց ինձի, ուղեցոյց տալով իր իմաստուն խորհուրդներով: Կարեւոր աջակցութիւն բերաւ նաեւ Գերշ. Տ. Մեսրոպ Արք. Աշճեան, որ ընծայեց բազմաթիւ օգտաշատ տեղեկութիւններ:

Ծրագիրը լուրջ աշխատանքի կը կարօտէր: Երբ առաջնորդարանիս կրօնական դաստիարակութեան վարիչ՝ Էլիզ Անդրէասեան առաջարկեց, որպէսզի շարականներու հաւաքածոյ մը պատրաստեմ, ես դոյզն ինչ գաղափար չունէի թէ դաշտը որքա՞ն ընդարձակ է եւ ես որքա՞ն անպատրաստ եմ հոն գործելու: Բարեբախտաբար, ան յուսահատութեան չմատնուեցաւ:

Դժուար թէ ես կարենայի գլուխ հանել այս աշխատասիրութիւնը առանց բարեկամներու եւ գործակիցներու բարեձիր օժանդակութեան: Հոգշ. Տ. Գրիգոր Վրդ. Մագսուտեան համբերութեամբ բացատրեց լեզուական եւ ծիսագիտութեան խրթին կէտերը: Արժշ. Տ. Կարապետ Քհնյ. Քոչաքեան ստուգեց բովանդակութիւնը վարդապետական ճշգրտութեան համար: Հոգշ. Տ. Սուրէն Վրդ. Չինչինեան կատարեց հայերէն բնագրին նախապատրաստութիւնը: Ճագ Անդրէասեան աշխարհիկ երգերու, իսկ Հայր Ճէյմս Տոյլ շարականներու անգլերէնի թարգմանութիւնը հայթայթեցին: Վերջապէս, Յակոբ Գալֆայեան թելադրեց սրբազան մեղեդիներու սկզբնական ցանկը: Երախտապարտ եմ բոլորին ալ:

Այս հատորին պատրաստութիւնը հրճուանքի անծայրածիր աղբիւր մը եղաւ. անոր շնորհիւ աւելի կարդացի, ալ աւելի սորվեցայ, առաւել եւս խորացայ հայկական քաղաքակրթութեան մէջ: Ես կը հաւատամ որ սրբահոգի Կոմիտասը, որ վերստեղծեց, վերանորոգեց եւ ամէն բանէ վեր, ակնածանք ցոյց տուաւ հայկական երաժշտութեան հանդէպ, պիտի վաւերացնէր այս ձեռնարկը:

Շահան Արծրունի

Ի յիշատակ մեծ մօրս՝ Տիգրանուհի Գալբագեանին,
որ զիս պատուաստեց աւանդութեան զգացումով:

Canonical Hymns

The genre of *sharagan* (canonical hymns) is the crowning jewel of Armenian Christian sacred music. Liturgical chants have formed a significant aspect of the Armenian service from the very beginning. When Christianity was established in Armenia in the early fourth century, traditionally dated as 301, sacred melodies were created by St. Sahag Bartev, St. Mesrob Mashdots, and Movses Khorenatsi, launching a rich musical tradition. *Sharagan* (literally, "based on order") are hymns—songs of praise, thanksgiving, and adoration of God—that are canonized by the church and thus organized according to the ecclesiastical calendar. In addition, they may be categorized into eight melody-modes, each having musical characteristics less prescriptive than Western scales in formulating new melodies.

Sharagan hymns, which grew in number over the centuries, were initially organized by the eighth century bishop and intellectual Stepanos Syoonetsi. They were then overhauled and greatly expanded by the twelfth century catholicos, hymnographer, and author St. Nerses Shnorhali, who gave the hymns their final format. The *sharagan* hymns are collected in a book of canonical hymns, called the *sharagnots*, which contains the text as well as the melody. The text is in *krapar* (classical Armenian) and the melody indicated in a system of musical notation different from our modern staff notation. Known as *khazakrootyoon* (ekphonetic notation), this system consists of signs, or *khaz*, that are often placed on top of the scribed text and resemble shorthand symbols in appearance. In time, the method developed into a highly complex order, which proved to be too esoteric to survive. Eventually, it fell into disuse, and today it is essentially undecipherable.

After the fourteenth century, the melodies of the *sharagan* hymns began to be transmitted orally, without the support of the notation, and underwent further changes. Happily, Hampartsoom Limondjian, a composer and theoretician living in Constantinople at the turn of the nineteenth century, devised a new system of Armenian notation that would prevent further transmutation of the sacred melodies. Yeghia Dndesian was the first to record the *sharagan* hymns in the new Armenian notational system, preserving their integrity; later, Nigoghayos Tashjian in Etchmiadzin and Father Léonce Daïan in Venice would accomplish similar tasks.

In analyzing the large body of the *sharagan* hymns, three distinct musical styles become evident: syllabic, neumatic, and melismatic. The syllabic style stresses words over music—the text being the significant element, with music serving only to support it. In general, such *sharagan* hymns feature one note for each syllable of the text. The hymns of this style have reached us almost intact. In the neumatic style, the words and the music enjoy equal importance, and a group of notes are given to a single syllable of the text. Finally, the melismatic style connotes a highly florid form, in which complex melodic patterns are set against a single syllable, reducing the text to unintelligibility. The *sharagan* hymns belonging to this last style have been greatly altered over the centuries.

Կանոնական Շարականներ

Շարականի սեռը հայկական եկեղեցական երաժշտութեան ադամանդակուռ փառապսակն է: Երաժշտութիւնը հայկական ծէսին մաս կը կազմէր քրիստոնէութեան երկրին մէջ հաստատումէն ասդին՝ Դ. դարուն սկիզբը, 301 թուականին, երբ Ս. Սահակ Պարթեւ, Ս. Մեսրոպ Մաշտոց եւ Մովսէս Խորենացի հիմը դրին երաժշտական հարուստ աւանդութեան մը: Շարականները Աստուծոյ ուղղուած գոհութեան, գոհաբանութեան եւ պաշտամունքի երգեր են, վաւերացուած՝ եկեղեցւոյ կողմէ եւ համադրուած՝ համաձայն եկեղեցական օրացոյցին: Բաց աստի, անոնք դասաւորուած են ութը ձայնեղանակներու՝ կամ ութձայներու դրութեամբ, իւրաքանչիւրը ունենալով երաժշտական յատկանիշեր, որոնք նուազ պարտադիր են քան արեւմտեան ձայնաշարերը նոր մեղեդիներ բանաձեւելու մէջ:

Շարականները, որոնք թիւով աճեցան դարերու ընթացքին, սկզբնապէս կանոնական ձեւի մէջ դրուեցան Ը. դարու մտաւորական Ստեփանոս Եպս. Սիւնեցիի կողմէ: Հետագային, ԺԲ. դարու շարականագիր եւ հեղինակ Ս. Ներսէս Կաթողիկոս Շնորհալի խմբագրեց ու մեծապէս ընդլայնեց այս օրիներգները, անոնց աւանդելով վերջնական ձեւ: Շարականները հաւաքուած են *Շարակնոցին* մէջ, որ կը պարունակէ բնագիրը ինչպէս նաեւ եղանակը: Բնագիրը գրաբարով է, իսկ եղանակը ներկայացուած՝ երաժշտական նշանագրութեան դրութեամբ մը, որ տարբեր է արդի գծային նօթագրութենէն: Այս դրութիւնը՝ ծանօթ որպէս խազագրութիւն, կը բաղկանայ սղագրութեան նշաններուն նմանող խազերէ, որոնք յաճախ զետեղուած կ'ըլլան արտագրուած բնագրին վերեւ: Ժամանակով, այս դրութիւնը հետզհետէ բարդացաւ, անմատչելի դառնալով շատերու եւ կորսնցնելով իր այժմէականութիւնը:

ԺԴ. դարէն ետք, շարականներու եղանակները փոխանցուեցան միայն յիշողութեամբ, առանց խազագրութեան օգնութեան, ենթարկուելով շարունակական փոփոխութիւններու: Բարեբախտաբար, երգահան եւ տեսաբան Համբարձում Լիմոնճեան, որ կ'ապրէր Կ. Պոլսոյ մէջ ԺԹ. դարու առաջին կիսուն, հնարեց հայկական նշանագրութեան նոր դրութիւն մը, որով առաջքը պիտի առնուէր սըրբազան եղանակներու առաւել այլափոխման: Եղիա Տնտեսեան առաջինը եղաւ, որ շարականները արձանագրեց հայկական նշանագրութեան նոր դրութեամբ, պահպանելով անոնց կենսական նկարագիրը: Աւելի վերջ, Նիկողայոս Թաշճեան Ս. Էջմիածնի եւ Հայր Ղեւոնդ Տայեան Վենետիկի մէջ նման գործեր կատարեցին:

Եթէ վերլուծենք շարականներու ամբողջութիւնը, երաժշտական երեք ոճեր ի յայտ կուգան՝ վանկաչափական, ներվանկային եւ զարդարուն: Վանկաչափական ոճը շեշտը կը դնէ բառերուն քան թէ երաժշտութեան վրայ, քանի որ բնագիրը կարեւոր տարրն է իսկ երաժշտութիւնը անոր օժանդակողը միայն: Ընդհանրապէս,

նման շարականներու մէջ կայ բնագրին իւրաքանչիւր վանկին համար միայն մէկ ձայնանիշ: Այս ոճով շարականները մեզի հասած են գրեթէ անեղծ վիճակի մէջ: Ներվանկային ոճի պարագային, բառերը եւ երաժշտութիւնը կը ներկայացնեն հաւասար կարեւորութիւն եւ բնագրի իւրաքանչիւր վանկը կ'երգուի մէկէ աւելի ձայնանիշերով: Վերջապէս, երրորդը կը ներկայացնէ չափազանց զարդարուն ոճ մը, ուր եղանակային բարդ ձեւեր յատկացուած են առանձին վանկի մը, բնագիրը գրեթէ անհասկնալի դարձնելով: Այս վերջին ոճին պատկանող շարականները մեծ չափով այլափոխուած են դարերու ընթացքին:

Zanjařeli looso mayr Ջանճառելի լուսոյ մայր *[Christmas Eve Hymn]*

"Zanjařeli looso mayr" is associated with the Christmas Eve service known as *jrakalooyts* (lighting of the lantern), when the worshippers are given candles to burn. The practice originates from the third century, when on a certain vigil, according to Greek church historian Eusebius of Caesarea, the oil for the lamps in the Church of Jerusalem had run short, but was provided through a miracle by the Assyrian Bishop Narcissus. The lighting of candles not only serves a functional purpose in the church, but also manifests a liturgical observance. It symbolizes joy, divine reverence, and sacrifice because the candle consumes itself. Historically, in the Armenian Church, only candles made of beeswax were considered ritually clean; those manufactured of melted tallow were not permitted, as they come from dead animals. However, the use of animal fat is now allowed, since all traces of blood can be removed from it through modern technology.

"We bless and give glory to the Mother of the Light beyond words, the place where the Son without beginning lived. We bless and glorify the Mother of the Savior of all, who carried inside her the One whom the entire universe could not hold."




me- dza-tsoo- tsa- nemk. Zpo - lo - rits pur- goo - tyan mayr,
մե - ծա - ցու - ցա - նեմք: Ջրո - լո - րից փըր - կու - թեան մայր,
vor zan - da - ne - lin he - its i har - kan - ti ye - parts,
որ զան - տա - նե - լին յէ - ից ի յար - գան - դի ե - բարձ,
uz- na a - me- ne- kyan orh - noo- tyamp me- dza- tsoo - tsa - nemk.
ըզ - նա ա - մե - նե - քեան օրհ - նու - թեամբ մե - ծա - ցու - ցա - նեմք:

«Զանճաուելի լուսոյ մայր» շարականը յատուկ է Ս. Ծննդեան ճրագալոյցին, երբ հաւատացեալներուն կը բաժնուին մոմեր: Ըստ յոյն եկեղեցական պատմիչ Եւսեբիոս Կեսարացիի, այս սովորութիւնը ծագում առած է Գ. դարուն: Ան կը վկայէ որ Հսկումի արարողութեան մը միջոցին, Երուսաղէմի եկեղեցիին լապտերներուն նուազող իւղը հրաշքով հայթայթած է ասորի եպիսկոպոս Նարկիսոսը: Եկեղեցիին մէջ մոմ վառելը ոչ միայն գործնական նպատակ ունի այլ նաեւ ծիսակատարութիւն մըն է: Կը խորհրդանշէ ուրախութիւն, երկիւղածութիւն եւ զոհողութիւն՝ տրուած ըլլալով որ մոմը ինքզինքը կը սպառէ: Պատմական օրէնքով, հայ եկեղեցւոյ մէջ, միայն մեղրամոմէ շինուած մոմերը ընդունելի կը համարուին. հալած դմակէ պատրաստուածները արտօնուած չեն, որովհետեւ անոնք կու գան մեռած կենդանիներէ: Ներկայիս ճարպէ մոմերու գործածութիւնն ալ կը թոյլատրուի, քանի որ արիւնի բոլոր հետքերը կը վերցուին, շնորհիւ գիտական արդի միջոցներու:

«Օրհնութեամբ կը փառաւորենք աննկարագրելի լոյսին մայրը եւ անծայրածիր Որդիին բնակավայրը: Մենք օրհնութեամբ կը փառաւորենք բոլորին փրկութեան մայրը, որ իր արգանդին մէջ կրեց արարածներու անպարունակելին»:

Khorhoort medz Խորհուրդ մեծ *[Christmas Day Hymn]*

Canonically, Armenians celebrate Christmas on January 6, later than the rest of the Christian world. Early Christians, however, observed Christ's incarnation on January 6 as part of the larger Feast of Theophany, which, in addition to the nativity, marked the baptism of Christ, the visit of the Wise Men to Bethlehem, and the miracle at Cana. According to certain scholarly sources, the Roman Church moved Christmas to December 25 in order to celebrate two significant events in the religious calendar on two different dates: the nativity on December 25, and the baptism on January 6. However, others maintain that the Western Church chose December 25 in order to eliminate a joyful secular holiday related to the winter solstice. "Khorhoort medz" is attributed to the fifth century historiographer Movses Khorenatsi.

"How wonderful is the great mystery that was made known today. Shepherds and angels shared the good news with the world. A new king was born in the city of Bethlehem. Sons of men, bless Him, for He came down from heaven for our sins. Christ is born and revealed!"




ho - vivkn yer - ken unt hresh - dags,
ho - vivkn yer - ken unt hresh - dags,
dan a - ve - dis ash - khar - hi.
dan a - ve - dis ash - khar - hi.
Dzu - nav nor ar - ka
Dzu - nav nor ar - ka


i Pet - ghe - hem ka - gha - ki;
ի Բեթ - ղե - հէմ քա - ղա - քի.
vor - tik mart - gan orh - ne - tsek,
որ - դիք մարդ - կաւն օրհ - նե - ցէ՛ք,
zi va - sun mer mar - mna - tsav.
զի վա - սըն մեր մար - մնա - ցաւ:



Կաթոլիկականօրէն, Հայերը Ս. Ծնունդը կը տօնեն Յունուար 6-ին՝ տարբեր մնացեալ քրիստոնեայ աշխարհէն: Սկզբնական շրջանին, բոլոր քրիստոնեաներն ալ Քրիստոսի մարդեղութիւնը կը յիշատակէին Յունուար 6-ին, որ բացի Ս. Ծնունդէն կը նշէր Աստուածայայտնութեան հետ առընչակից ուրիշ տօներ ալ՝ Քրիստոսի մկրտութիւնը, Մոգերու այցելութիւնը ի Բեթղեհէմ, եւ Կանայի հրաշքը: Կարգ մը գիտական ուսումնասիրութիւններու համաձայն, հռովմէական եկեղեցին Ս. Ծնունդը փոխադրեց Դեկտեմբեր 25-ին, իսկ մկրտութիւնը պահեց Յունուար 6-ին, երկու նշանակալից դէպքերուն յատկացնելու համար տօնացոյցին մէջ առանձին թուականներ: Այսու հանդերձ, ուրիշներ կը հաւաստեն թէ արեւմտեան եկեղեցին ընտրեց Դեկտեմբեր 25-ը, ջնջելու համար աշխարհային ցնծալից տօն մը՝ կապուած ձմրան արեւադարձին հետ: «Խորհուրդ մեծ եւ սքանչելի» շարականը կը վերագրուի Ե. դարու պատմագիր Մովսէս Խորենացիին:

«Այսօր մեծ եւ սքանչելի խորհուրդ մը յայտնուեցաւ, որուն մասին հովիւները հրեշտակներուն հետ միասին կ'երգեն, աւետելով աշխարհին այս բարի լուրը: Նոր թագաւոր մը ծնաւ Բեթղեհէմ քաղաքին մէջ. որդինե՛ր, օրհնեցէք մեզի համար մարմին առնողը: Քրիստոս ծնա՛ւ եւ յայտնուեցա՛ւ»:

Ov zarmanali Ո՞վ զարմանալի *[Hymn for the Blessing of the Water]*

"Ov zarmanali" was authored by the twelfth century Catholicos Krikoris Bahlavooni. This popular hymn is sung during *chrorhnek,* or the Blessing of the Water, a service that follows the Christmas Liturgy and symbolizes the baptism of Christ. Not simply a religious ceremony, but a national observance, *chrorhnek* used to take place outdoors, usually at the shores of a river, in which the cross was immersed and the chrism poured into the water. History records vivid descriptions of this ceremony. One such event took place on January 6, 1032, during an encounter between the Byzantine King Vassil II and Catholicos Bedros I, who is reported to have miraculously changed the course of the Jorokh river near Trabzon. Another, in 1211, occurred near the city of Sis, when King Levon of Armenia invited his foreign guests to take part in this splendid observance, as chronicled by one of the visitors, Canonicos Willibrand.

"Oh, wondrous and great mystery that is revealed, God the Creator has come to the River Jordan. River, fear not, for I am your creator and I come to be baptized and clean myself of sin."




Ked, mi zar - hoo - rir, ko a - ra - richn em yes;
Գե՞տ, մի զար - հու - րիր, քո ա - րա - րիչն եմ ես.
ye - gyal mu - gur - dim yev lu - va - nam uz - meghs.
ե - կեալ մը - կըր - տիմ եւ լը - ւա - նամ ըզ - մեղս:

«Ո՞վ զարմանալին» գրուած է ԺԲ. դարու հեղինակ Գրիգորիս Կաթողիկոս Պահլաւունիի կողմէ: Այս ժողովրդական շարականը կ'երգուի Զատիկէն առաջ, որ կը յաջորդէ Ս. Ծննդեան պատարագին եւ կը խորհրդանշէ Քրիստոսի մկրտութիւնը: Զատիկը ոչ միայն կրօնական ծիսակատարութիւն այլ եւ ազգային տօն մըն է, որ տեղի կ'ունենար բացօդեայ, սովորաբար գետի մը եզերքին, ուր խաչը կը մխրճուէր եւ Ս. Միւռոնը կը թափուէր ջուրին մէջ: Պատմութեան մէջ կը գտնուին այս արարողութեան մասին վառ նկարագրութիւններ: Նման դէպք մը արձանագրուած է Յունուար 6, 1032-ի առընչութեամբ, հանդիպումի մը ընթացքին Բիւզանդիոնի թագաւոր Վասիլ Բ.-ի եւ Պետրոս Ա. Կաթողիկոսի միջեւ, որուն մասին կ'ըսուի թէ Տրապիզոնի մօտ Ճորոխ գետին ընթացքը հրաշքով փոխած է: Ուրիշ արձանագրութիւն մըն ալ կայ 1211-ին կապուած, երբ Կիլիկիոյ Լեւոն թագաւորը իր օտար հիւրերը Սիս քաղաքին մօտ հրաւիրած էր այս աքանչելի արարողութեան ներկայ գտնուելու, ըստ այցելուներէն մէկուն՝ Կանոնիկոս Ուիլիպրէնտի վկայութեան:

«Որքա՜ն զարմանալի է յայտնուած այս մեծ խորհուրդը՝ արարիչ Աստուծոյ Յորդանան գալուստը: Գե՛տ, մի՛ վախնար, ես քեզի ստեղծողն եմ. եկայ մկրտուելու եւ մեղքերս սրբելու»:


Norahrash bsagavor Նորահրաշ պսակաւոր *[Hymn for the Feast of Vartanantz]*

"Norahrash bsagavor" was written by Nerses Shnorhali to honor the 451 battle of Vartanants and its hero, St. Vartan Mamigonian. The Armenian Church and people mark this war of persecution between the Armenians and the Persians with special significance. According to the chroniclers of the period, on the eve of the Vartanants battle, Ghevont Yerets and other church leaders provided spiritual sustenance to the soldiers by conducting baptismal rites and other religious services. Although the battle was lost, the war with the Persians was won in 484, when Vahan Mamigonian, Vartan's nephew, signed the Treaty of Nvarsag. He thus established the rights of oppressed people and obtained the privilege of practicing Christianity centuries before the Magna Carta, the English charter signed in 1215.

"Wondrous crown-bearer and leader of the brave, you courageously armed yourself against death with the weapon of the Holy Spirit. Vartan, brave martyr, you made the enemy run from you and crowned the Church with your rosy blood."




a - ri - a - par unt - tem ma-hoo; Var - tan,
ա - րի - ա - բար ընդ - դէմ մա-հու. Վար - դան,
kach na - ha - dag, vor va - ne - tser
քա՛ջ նա - հա - տակ, որ վա - նե - ցեր
uz - tush - na - min, var - ta - gooyn ar - yam - put ko
ըզ - թշ - նա - մին, վար - դա - գոյն ար - եամ - բըդ քո



«Նորահրաշ պսակաւոր» շարականը յօրինուած է Ներսէս Շնորհալիի կողմէ ի յիշատակ Վարդանանց պատերազմին եւ Ս. Վարդան Մամիկոնեանին: Հայկական եկեղեցին եւ ժողովուրդը մասնաւոր հանդիսութեամբ կը նշեն Հայերու եւ Պարսիկներու միջեւ 451 թուին կատարուած պատերազմը: Այդ շրջանի ժամանակագիրներու համաձայն, Վարդանանց պատերազմի նախօրեակին, Ղեւոնդ Երէց եւ ուրիշ եկեղեցական առաջնորդներ հոգեկան սնունդ հայթայթեցին զինուորներուն՝ կատարելով մկրտութեան խորհուրդ եւ այլ կրօնական արարողութիւններ: Թէեւ Հայերը 451-ի ճակատամարտը կորսնցուցին բայց պատերազմը շահեցան, երբ 484-ին Վահան Մամիկոնեան՝ Վարդան Մամիկոնեանի եղբօրորդին, Պարսիկներու հետ ստորագրեց Նուարսակի դաշնագիրը: Այսպէսով, ան հաստատեց փոքրամասնութեանց իրաւունքը եւ ձեռք ձգեց առանձնաշնորհումը քրիստոնէութեան հետեւելու, 1215-ին ստորագրուած անգլիական մեծ հրովարտակ, Magna Carta-էն դարեր առաջ:

«Հիանալի դափնեկիր եւ քաջերու զօրագլուխ, դուն հոգիին սուրովը զինուած արիաբար մահուան դէմ դրիր: Վարդա՛ն, քա՛ջ նահատակ, թշնամիները հեռացուցիր եւ քու վարդի գոյն արիւնովդ եկեղեցին փառաւորեցիր»:

Pann vor unt Hor Բաննն որ ընդ Հօր *[Carnival Day Hymn]*

"Pann vor unt Hor," authored by Nerses Shnorhali, is associated with *Poon paregentan*, the Sunday preceding the Great Lent. Although commonly translated as Shrovetide, the word *paregentan* is similar to the Western carnival. *Poon paregentan*, a time of festivity and indulgence before the solemn season of fasting, probably replaced pre-Christian fertility rites related to the arrival of spring and the sprouting of vegetation. The church service on this day recalls the beauty and happiness of Paradise.

"Christ, who is one with the Father and with the Holy Spirit, joined His image with our human nature and gave it glory, placing it in Paradise."





«Բանն որ ընդ Հօր» շարականը՝ յօրինուած Ս. Ներսէս Շնորհալիի կողմէ, Բուն բարեկենդանի օրուան յատուկ է: Ժողովրդական լեզուով ծանօթ որպէս բակլախորան, Բարեկենդանը նման է carnaval-ին, որպէս ուրախութեան եւ զուարճութեան տօն, որ կը նախորդէր Մեծ պահոց: Բարեկենդանը հաւանաբար փոխարինած է արգասաբերութեան հեթանոսական ծէսերը, որոնք կապուած էին գարնան ժամանումին եւ բուսականութեան աճման հետ: Այդ օրուան եկեղեցական արարողութիւնը կը յիշեցնէ դրախտին գեղեցկութիւնն ու հոն տիրող երջանկութիւնը:

«Միածին Որդին, որ նոյնն է Հօրը էութեանը եւ Սուրբ Հոգիին գոյութեանը հետ, Իր պատկերը միացուց մեր երկրաւոր ինքնութեանը, զայն զարդարեց Իր փառքովը եւ զետեղեց երկնքի արքայութեան մէջ»:

Aysor unt hragerbyan Այսօր ընդ հրակերպեաց *[Palm Sunday Hymn]*

The Armenian name for Palm Sunday is *dzaghgazart*, a word that has no connection with a Biblical story or a national tradition. *Dzaghgazart* was probably the name of a pre-Christian rite that was assimilated into the Armenian Church. It recalls the entrance of Jesus into Jerusalem on the Sunday before Passover, when people holding branches of palm and olive trees had lined up in the streets. They were there to see in person the individual who had just resurrected Lazarus of Bethany. On *dzaghgazart,* the church is adorned with a multitude of flowers, verdant branches, and bright lanterns to celebrate Christ's entrance into Jerusalem. In the United States, palm branches are distributed to the faithful following the service, who then fashion them into small looped crosses and place them around the home as blessed reminders of the Resurrection. In some other parts of the Armenian world, olive branches are given to the members of the congregation, who set them in an archway in their homes as a sign of welcome. "Aysor unt hragerbyan" is chanted on *dzaghgazart.*

"Elders with olive branches and children with palm branches sing praise today with the angels. Hosanna! Blessed is He who comes in the name of the Lord."




dzerkn vos - dovk yev dghaykn
ծերքն ոս - տովք եւ տղայքն
ar - ma - ve - nyok;
ար - մա - ւե - նեօք.
Ov - san - na
Ով - սան - նա



Ծաղկազարդը Ս. Զատիկը կանխող կիրակին է: Ծաղկազարդ բառը առընչութիւն չունի Ս. Գրական պատմութեան մը կամ ազգային աւանդութեան մը հետ. հաւանաբար անունն էր նախաքրիստոնէական ծէսի մը, որ իրագուեցաւ հայկական եկեղեցիին կողմէ: Ան կը վկայէ Յիսուսի Երուսաղէմ մուտքը Պասեքը կանխող կիրակին, երբ ժողովուրդը արմաւենիի եւ ձիթենիի ճիւղեր բռնած շարուած էր ճամբաներու եզերքը: Անոնք եկած էին անձամբ տեսնելու այն անհատը, որ յարութիւն տուած էր Ղազարոսին: Ծաղկազարդի առթիւ եկեղեցին կը զարդարուի առատ ծաղիկներով, դալար ճիւղերով եւ պայծառ ջահերով՝ տօնախմբելու Քրիստոսի Երուսաղէմ մուտքը: Ամերիկայի մէջ Ս. Պատարագի աւարտին արմաւենիի ճիւղեր կը բաժնուին հաւատացեալներուն, որոնք յետոյ օղակաձեւ փոքր խաչեր կը կերտեն անոնցմով եւ կը դնեն տան մէջ, որպէս յիշեցում Ս. Յարութեան: Հայկական կարգ մը ուրիշ կեդրոններու մէջ, ձիթենիի ճիւղեր կը բաշխուին եկեղեցւոյ անդամներուն, որոնք կը զետեղեն զանոնք տուներու կամարին տակ, որպէս բարեգալուստի նշան: «Այսօր ընդ հրակերպեանը» կ'երգուի Ծաղկազարդի օրը:

«Այսօր ծերերը ձիթենիի ոստերով եւ մանուկները արմաւենիի ճիւղերով օրհնութիւն կու տային հրեշտակներուն հետ՝ Ովսաննա, Տիրոջը անունով եկողը օրհնեալ է»:

Nayyats sirov Նայեաց սիրով *[Vigil Hymn]*

Most religions prescribe a form of dietary discipline intended to strengthen the spiritual life by weakening the attraction to worldly pleasures. Christians fast, Jews avoid ritually unclean foods, and Moslems observe a strict timetable for eating during Ramadan. In the church, there are two forms of dietary temperance: fasting and lent. In the Armenian tradition, fasting is total abstention from all foods and drinks for several hours before taking communion. Lent is a selective regimen in which the consumption of all meat, poultry, fish, and dairy products is forbidden. Instead, the eating of vegetables, fruits, and legumes, including their by-products such as olive oil and wine, is encouraged. (Honey, although an animal product, is also sanctioned.) Lent is observed during the seven weeks prior to Easter, before Feast Days, and on most Wednesdays and Fridays. "Nayyats sirov," attributed to Nerses Shnorhali, is chanted at *hsgoom* (vigil, a nocturnal devotional service) during Great Lent.

"Merciful Father, look down with love on the works created by Your hands and grant our weak defense the legion of angels. Free our soul from the temptation of evil spirits who roam about in darkness, that, day and night, we might give you unceasing glory."




door ba - ha - ban mez du - ga - ratss; pur - gya zan - tsins
տուր պա - հա - պան մեզ տը - կա - րացս. փըր - կեա՛ զան - ձիս
i por - tsa - nats i kha - va - ri shur - chots ti - vats;
ի փոր - ձա - նաց՝ ի խա - ւա - րի շըր - ջոց դի - ւաց.
zi i dvun - chyan yev ki - she - ri da - koots
զի ի տուրն - ջեան եւ գի - շե - րի տա - քուց



Կրօնքներէ շատեր կը յանձնարարեն ուտելիքներէ հեռու մնալու ժուժկալութիւն, որուն նպատակն է զօրացնել հոգեկան կեանքը, տկարացնելով աշխարհային հաճոյքներու գրաւչութիւնը: Քրիստոնեաները ծոմ կը պահեն, Հրեաները կը խուսափին ծիսականօրէն պիղծ ուտելիքներէ, իսկ Մահմետականները պահեցողութեան պարագային կը հետեւին խիստ ժամանակացոյցի մը: Եկեղեցւոյ աւանդութեան մէջ պահեցողութիւնը երկու տեսակ է՝ ծոմ եւ պահք: Ծոմը լրիւ հրաժարում է բոլոր ուտելիքներէ եւ խմիչքներէ Ս. Հաղորդութիւն առնելէ առաջ: Պահքը ընտրողական կանոն մըն է, որ կ'արգիլէ սպառումը ամէն տեսակ մսեղէնի, հաւեղէնի, ձկնեղէնի եւ կթեղէնի: Փոխարէն կը թելադրուի ուտել բանջարեղէն, պտուղ եւ ընդեղէն՝ ներառեալ անոնց երկրորդական արտադրութիւնները, ինչպէս ձէթ եւ գինի: (Մեղրը կենդանիի արտադրութիւն ըլլալով հանդերձ արտօնուած է:) Պահքը տեղի կ'ունենայ Ս. Զատիկը կանխող եօթը շաբաթներու միջոցին, տաղաւարներէ առաջ, եւ ընդհանրապէս չորեքշաբթի եւ ուրբաթ օրերը: «Նայեաց սիրով» շարականը կը վերագրուի Ս. Ներսէս Շնորհալիին եւ կ'երգուի Հսկումի ժամանակ: (Հսկումը գիշերային արարողութիւն մըն է, որ կը կատարուի Մեծ պահքի ընթացքին:)

«Ո՛վ գթասէր Հայր, Քու ստեղծած արարածներուդ վրայ սիրով նայէ՛: Հրեշտակներուդ բանակը պաշտպան թո՛ղ կանգնի անկարներուս վրայ: Մթութեան մէջ շրջող սատանաներուն գործելիք փորձանքներէն մեզի փրկէ՛, որպէսզի գիշեր ցերեկ, անդադար, կարենանք քեզի փառք տալ»:

Harevelits Յարեւելից *[Sunrise Hymn]*

Liturgically, a new day commences at sundown and lasts until sundown the following day. It is divided into several canonical hours or offices, including night, morning, sunrise, midday, evening, peace, and rest. The Sunrise Hour, or *arevakal*, holds special significance in the Armenian Church and is associated with Lent. During Great Lent, in certain Armenian centers, different churches are designated for *arevakal* services, when large numbers of the faithful attend to hear hymns of exquisite beauty and high aesthetic quality. Nerses Shnorhali is the noted hymnographer of the *arevakal* chants, which speak of spiritual illumination, adornment, and truth. The chant "Harevelits" is associated with *arevakal.*

"From the East to the West, from the North and from the South, all nations and peoples bless the creator of creatures with a new blessing, for He made the light of sunrise today over the world."




a - me - nayn azk yev a - zink,
ա - մե - նայն ազգ եւ ա - զինք,
horh - noo - tyoon nor orh - ne - tsek za - ra - richn
յօրհ - նու - թիւն նոր օրհ - նե - ցէք զա - րա - րիչն
a - ra - ra - dzots, vor dza - kyats uz - looys
ա - րա - րա - ծոց, որ ծա - գեաց ըզ - լոյս



Ծիսական տեսակէտէ, նոր օրը կը սկսի արեւու մայրամուտով եւ կը տեւէ մինչեւ յաջորդ օրուան մայրամուտը: Օրուան ընթացքին կան շարք մը կանոնական ժամեր՝ գիշերային, առաւօտեան, արեւագալի, ճաշու, երրորդ, վեցերորդ, իններորդ, երեկոյեան, խաղաղական եւ հանգըստեան: Այս ժամերգութիւններէն Արեւագալի արարողութիւնը մասնաւոր նշանակութիւն մը ունի հայկական եկեղեցւոյ մէջ եւ կը կատարուի հանդիսաւորապէս Մեծ պահքի ընթացքին: Այս ժամանակաշրջանին, սովորաբար, տարբեր եկեղեցիներ կը նշանակուին Արեւագալի արարողութիւններու համար, երբ մեծ թիւով հաւատացեալներ ներկայ կը գտնուին լսելու այս շարականները, որոնք իրենց հոգեզմայլ եղանակներով գեղարուեստական բարձր որակ ունին: Ս. Ներսէս Շնորհալիին յայտնի հեղինակն է Արեւագալի շարականներուն, որոնք կը խօսին հոգեւոր լոյսի, աստուածապաշտութեան եւ ճշմարտութեան մասին: «Ցարեւելիցը» կապուած է Արեւագալ ժամերգութեան հետ:

«Ազգեր եւ ժողովուրդներ, արեւելքէն մինչեւ արեւմուտք, հիւսիսէն թէ հարաւէն, նոր օրհնութեամբ փառաբանեցէք արարիչներու ստեղծիչը»:

Tsoghya his Ցողեա՛ յիս *[Hymn for the Washing of the Feet]*

During the week preceding Easter, the final events prior to Christ's resurrection are recreated. On Holy (Maundy) Thursday, the sanctuary is adorned with fresh flowers and immaculate linen to celebrate the Last Supper. In a separate service, later in the afternoon, *vodnlva* (The Washing of the Feet) takes place, signifying an act of humility and love by Christ. According to Armenian tradition, twelve people are led onto the bema, where the clergyman solemnly washes the right foot of each individual, then dries and anoints it with butter or oil to demonstrate his servitude to his congregation. "Tsoghya his," from the 51st Psalm, is chanted during the Washing of the Feet.

"Purge me with hyssop, and I shall be clean; wash me, and I shall be whiter than snow. Wash me thoroughly of my iniquity, and cleanse me of my sin."





Ս. Զատիկը կանխող շաբթուան ընթացքին, Քրիստոսի Ս. Յարութեանէն առաջ պատահած վերջին դէպքերը կը վերապրինք: Աւագ հինգշաբթի օր եկեղեցին կը զարդարուի թարմ ծաղիկներով եւ մաքուր ու ճերմակ կտաւով՝ տօնախմբելու վերջին ընթրիքը: Նոյն օրը, երեկոյեան տեղի կ'ունենայ Ոտնլուայի արարողութիւնը, որ կը խորհրդանշէ Քրիստոսի խոնարհութիւնը եւ սէրը: Հայկական աւանդութեան համաձայն, տասներկու անձեր կ'առաջնորդուին եկեղեցւոյ բեմը, ուր հոգեւորականը հանդիսաւորապէս կը լուայ իւրաքանչիւրին աջ ոտքը եւ ապա կը սրբէ եւ կ'օծէ զայն կարագով կամ ձէթով, ցոյց տալու իր խոմարհութիւնը՝ հանդէպ հաւատացեալ ժողովուրդին: 51-րդ Սաղմոսէն վերցուած «Ծօղեա՛ յիս» շարականը կ'երգուի Ոտնլուայի արարողութեան ընթացքին:

«Անուշահոտ իղով թրջէ՛ զիս, որպէսզի մաքրուիմ. լուա՛ զիս, որպէսզի ձիւնի նման սպիտակ ըլլամ. ազատէ՛ զիս չարագործութիւններէս եւ ձերբազատէ՛ զիս մեղքերէս»:

Aysor anjaŕ Այսօր անձառ *[Passion Hymn]*

The commemoration of the Passion—the trial, the flagellation, the road to Calvary, and the crucifixion of Christ—takes place on Holy (Good) Friday. In fact, its observance starts after sundown on Thursday evening. The Holy Friday service begins with *khavaroom* (The Coming of Darkness), when everything in the church is veiled in black to express mourning. In the course of the ritual, eleven lit candles, each representing an apostle (minus Judas), are gradually extinguished to represent the betrayal of Christ. On Friday afternoon, the Deposition of Christ's body from the Holy Cross takes place, during which a replica of his tomb is carried in a procession within the church compound. "Aysor anjaŕ," a hymn by Nerses Shnorhali, is chanted during *khavaroom*.

"Today, the rising of the Indescribable Light reaches its completion for our salvation and He comes humbly into the Upper Room to celebrate the Feast of the Tabernacles. Before the mystical Supper, clad in light, He girds Himself with a towel and taking water, like a servant, washes His disciples' feet."




i sdve - ra - gan do - nits lu - roomn;
ի ստուե - րա - կաև տո - նից լը - րումն.
nakh-kan zunt - ri - sun khor - hur - to, spa-dzav ghen - chag
նախ-քան զընթ-րի - սըն խոր - հըր-դոյ, սպա-ծաւ ղեն - ջակ
ar - goghn loo - so; yev choor ar̃ - yal
արկողն լու - սոյ. եւ ջուր առ - եալ



Քրիստոսի չարչարանքներու յիշատակութիւնը՝ Դատավարութիւնը, Մտրակումը, Գողգոթայի ճամբան եւ Խաչելութիւնը, տեղի կ'ունենայ Աւագ ուրբաթ օր: Արդարեւ սոյն յիշատակումը կը սկսի ŕինգշաբթի երեկոյեան, արեւամարէն ետքը, Խաւարումով, երբ եկեղեցւոյ մէջ ամէն ինչ կը քօղարկուի սեւով, որպէս սուգի նշան: Արարողութեան ընթացքին տասնմէկ վառած մոմեր, իւրաքանչիւրը ներկայացնելով առաքեալ մը՝ նուազ Յուդան, մէկ առ մէկ կը մարեն ամէն Աւետարանի ընթերցումէն ետք: Այս գործողութիւնը կը խորհրդանշէ Քրիստոսի մատնութիւնը: Օրուան վերջաւորութեան կը կատարուի Քրիստոսի թաղումը, որու ընթացքին «գերեզմանը» կը զետեղուի եկեղեցւոյ դասին մէջ: «Այսօր անճառ» շարականը՝ գրուած Ս. Ներսէս Շնորհալիի կողմէ, կ'երգուի Խաւարումի արարողութեան միջոցին:

«Այսօր աննկարագրելի լոյսը ծագելով մեր փրկութիւնը կ'ապահովէ, իսկ վերնատան մէջ խոնարհելով կը կատարէ ստուերական տօնը: Խորհուրդի ընթրիքէն առաջ, Ան լոյսերու մէջ թաթխուած եւ ղենջակով փաթթուած, ջուր կ'առնէ եւ խոնարհաբար իր աշակերտներուն ոտքը կը լուայ»:

Haryav Krisdos Յարեա՛ւ Քրիստոս *[Easter Eve Hymn]*

As with Christmas, the Armenian Church begins to celebrate Easter on its Eve, also named *jrakalooyts*. Should the observer receive communion on Easter Eve, he may then break the strict lenten diet for the Saturday dinner and consume fish and dairy products; however, eating of meat on *jrakalooyts* is still not allowed. Breaking the lent in this fashion is called *navagadik*, meaning "newly built." For this reason, the sacred inauguration of a church, a dwelling, or a venture is also considered a *navagadik*.

Nerses Shnorhali is the author of "Haryav Krisdos," which is associated with the Easter Eve service.

"Jerusalem, praise the Lord! Christ has risen from the dead. Halleluia! Nations, come and sing to the Lord, halleluia, to the One who rose from the dead and gave light to the world. Halleluia!"




A - le - loo - ia. Parḱ
Ա - լէ - լու - իա: Փառք
Hor yev Vort - vo yev Hok-vooyn Sur - po.
Հօր եւ Որդ - ւոյ եւ Հոգ-ւոյն Սրբ - բոյ:
Ha - roo - tse - looyn i me - ṙe - lots.
Յա - րու - ցե - լոյն ի մե - ռե - լոց:


A - le - loo - ia.
Ա - լէ - լու - իա:
Vor zash - khar - hus loo - sa - vor - yats.
Որ զաշ - խար - հըս լու - սա - ւոր - եաց:
A - le - loo - ia.
Ա - լէ - լու - իա:

Ս. Ծնունդի նման, եկեղեցին կը սկսի Ս. Զատկի տօնակատարութիւնը աւոր նախօրեակին՝ ծաւօթ ճրագալոյց անուանով: Եթէ հաւատացեալը Ս. Հաղորդութիւն ստանայ շաբաթ երեկոյեան, ան կ'արտօնուի Մեծ պահքի խիստ պահեցողութիւնը յաջորդող ընթրիքի ընթացքին աւրելու եւ ուտելու ձկնեղէն եւ կթեղէն արտադրութիւններ. սակայն եւ այնպէս, ճրագալոյցի ընթրիքին մսեղէնի գործածութիւնը դեռ թոյլատրուած չէ: Այս կերպով պահքը աւրելը կը կոչուի նաւակատիք, որ կը նշանակէ «նոր շինուած»: Նաւակատիք կը համարուի նաեւ նուիրական բացումը եկեղեցիի մը, բնակարանի մը կամ ձեռնարկի մը: Ս. Ներսէս Շնորհալի հեղինակն է «Յարեա՛ւ Քրիստոս» շարականին, որ կապուած է Ս. Զատկի նախօրեակի արարողութեան հետ:

«Երուսաղէ՛մ, Տէրը փառաբանէ: Քրիստոս յարութիւն առաւ մեռեալներէն, ալէլուիա: Պատիւ Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին: Մեռեալներէն յարութիւն առնողին եւ աշխարհը լուսաւորողին, ալէլուիա»:

Aysor haryav Այսօր յարեաւ *[Easter Day Hymn]*

Easter is the Christian Passover and the holiest day in the ecclesiastical calendar. *Zadig*, Armenian for Easter, is an indigenous word with numerous possible etymological explanations. Some scholars believe that the word derives from *"zadel"* (to separate) and has to do with the vernal equinox—a pre-Christian rite—when light and dark are equally separated. Others claim that the word *zadig* is connected to *"azadootyoon"* (freedom), meaning freedom from the Passion. It is customary to serve Easter eggs on Easter. Armenians dye them red only, using the natural dyes from onion skins, to symbolize Christ's blood. They also prepare *choreg*, a cakelike bread, which is made by interweaving three rope-shaped pieces of daugh, possibly meant to represent the Trinity. In Armenian cuisine, *choreg* is traditionally flavored with mahaleb, the yellow seed encased in the black-cherry stone. "Aysor haryav" is sung during the Easter service and is authored by the twelfth century philosopher Abp. Nerses Lampronatsi.

"Christ, the eternal Bridegroom of heaven, is risen from the dead. Rejoice, church, bride of the earth; and bless your God, O Sion, with voices of joy."




pe - sayn an - mah
փե - սայն ան - մահ
yev yerg - na - vor;
եւ երկ - ընա - ւոր.
kez a - ve - dik
քեզ ա - ւե - տիք


khun - too - tyan harsn
խըն - դու - թեան հարսն
i herg - re
ի յերկ - րէ
ye - ge - ghe - tsi;
և - կե - ղե - ցի.


orh - nya i tsayn
օրհ - նեա՛ ի ձայն
tsun - dzoo - tyan
ցղն - ծու - թեան
zAs - du - vadz
զԱս - տը - ւաձ



Ս. Զատիկը քրիստոնէական Պասեքն է եւ եկեղեցական օրացոյցին մէջ ամէնէն նուիրական օրը: Զատիկ անունը բնիկ բառ մըն է՝ ստուգաբանական բազմաթիւ բացատրութիւններով: Բանասէրներէ ոմանք կը կարծեն թէ բառը յառաջ կու գայ «զատել» բայէն եւ առընչութիւն ունի գարնան գիշերահաւասարին հետ, որ նախաքրիստոնէական արարողութիւն մըն էր: Ուրիշներ կ'ենթադրեն թէ զատիկ բառը կապուած է «ազատութիւն» գոյականին հետ՝ չարչարանքէ ազատութիւն իմաստով: Սովորութիւն է հաւկիթ սպասարկել Ս. Զատկին: Հայերը միայն կարմիր կը ներկեն հաւկիթը, գործածելով սոխի կեղեւը որպէս բնական ներկ՝ խորհրդանշելու համար Քրիստոսի արիւնը: Անոնք կը պատրաստեն նաեւ *չէօրէկ*, կարկանդակի նման հաց մը, որ կը շինուի իրարու հիւսելով չուանաձեւ խմորի երեք կտորներ, հաւանաբար խորհրդանշելով Ս. Երրորդութիւնը: Հայկական խոհանոցին յատուկ է *չէօրէկ*-ը համեմել վայրի հալիքով, որ սեւ կեռասի կուտին մէջ պատուած դեղին հունտ մըն է: «Այսօր յարեաւ» շարականը, որուն հեղինակն է ԺԲ. դարու մատենագիր Ներսէս Արք. Լամբրոնացի, կ'երգուի Ս. Զատկի արարողութեան միջոցին:

«Այսօր երկնաւոր եւ անմահ փեսան մեռելներէն յարութիւն առաւ. ո՞վ եկեղեցի՝ երկրաւոր հարս, ուրախութեան աւետիս քեզի. Սիո՛ն, ցնծութեան ձայնով օրհնէ՛ քու Աստուածդ»:

Hampartsav Dern mer Համբարձաւ Տէրն մեր *[Ascension Hymn]*

Ascension Day is linked to a popular Armenian custom called *vijag* (lot), a game that may be traced to the selection of St. Mattias by lot to replace Judas, an event that took place directly after the Ascension (Acts I:26). On this day, following church services, young men and women gather to find out their destiny. A large bowl is filled with water brought from seven different sources. All participants contribute a personal item, such as a ring, an earring, or a bracelet, to the bowl, together with flowers gathered from seven different fields. The bowl is then covered with a piece of cloth. A designated individual retrieves each item as traditional phrases are recited, known collectively as "jan gyooloom" (my dear sweetie) thus predicting the lot of the person to whom the item belongs. There are many adages, songs, and games associated with *vijag*, the most famous being "Hampartsoom yayla," found in Tigranian's opera *Anoosh*. "Hampartsav Dern mer," the hymn sung on Ascension Day, was created by Nerses Lampronatsi.

"Our Lord went up to heaven, saying to His disciples: 'Stay in the city of Jerusalem until you have been given power from heaven.'"




her - gins, a - se - lov
յեր - կինս, ա - սե - լով
a - sha - ger - datsn, nus - da - rook
ա - շա - կեր - տացն, նըս - տա - րուք
i ka - gha - kit Ye - roo - sa - ghem,
ի քա - ղա - քիդ Ե - րու - սա - ղէմ,


min - chev zke - noo - tsook zo - roo - tyoon
մին - չեւ զգե - ցու - ցուք զո - րու - թիւն
i par - tsants.
ի բար - ձանց:

Հայկական ժողովրդական սովորութիւն է Համբարձման օրը վիճակ քաշել: Վիճակը խաղ մըն է, որ ծագում առած է Յուդայի տեղը փոխարինող Ս. Մատաթիայի ընտրութեան պարագայէն, դէպք մը որ տեղի ունեցաւ Համբարձումէն անմիջապէս ետք (Գործք Առաքելոց 1:26): Այդ օրը, եկեղեցական արարողութիւններու աւարտին, երիտասարդ մանչեր ու աղջիկներ կը հաւաքուին իմանալու իրենց ճակատագիրը: Մեծ անօթ մը կը լեցուի եօթը տարբեր աղբիւրներէ բերուած ջուրով եւ եօթը տարբեր դաշտերէ հաւաքուած ծաղիկներով: Բոլոր մասնակցողները կու տան անձնական իր մը, ինչպէս մատանի մը, օղ մը կամ ապարանջան մը, որոնք կը դրուին անօթին մէջ, որ յետոյ կը ծածկուի լաթի կտորով մը: Որոշեալ անհատ մը կը վերցնէ իրերը մէկ առ մէկ, մինչ աւանդական խօսքեր կ'արտասանուին գուշակելով վիճակը այն անձին՝ որուն կը պատկանի առարկան: Վիճակի հետ կապուած բազմաթիւ ասացուածքներ, երգեր եւ խաղեր կան՝ ծանօթ «ջան կիւլիւմ» անունով, որոնցմէ ամէնէն նշանաւորը Տիգրանեանի *Անուշ* երգախաղին մէջ գտնուող «Համբարձում եայլան» է: «Համբարձաւ Տէրն մեր» շարականը կ'երգուի Համբարձման արարողութեան ընթացքին եւ յօրինուած է Ներսէս Լամբրոնացիի կողմէ:

«Մեր Տէրը դէպի երկինք համբարձաւ, աշակերտներուն ըսելով՝ մնացէ՛ք Երուսաղէմ քաղաքին մէջ, մինչեւ որ զօրութիւն ստանաք երկինքէն»:

Aŕakelo aghavno Առաքելոյ աղաւնոյ *[Hymn of Pentecost]*

Originally established as the harvest festival, *hokekaloosd*, or Pentecost, is the feast of the Descent of the Holy Spirit upon the disciples. Celebrated fifty days after Easter, this manifestation is described in Acts 2 as taking the form of tongues of fire accompanied by the sound of a rush of wind. Accordingly, the apostles were able to speak in tongues so that people of different languages could understand them. Nerses Lampronatsi claims that Armenian was one of the languages spoken by St. Thaddeus. Nerses Shnorhali has contributed greatly to elaborating the feast of *hokekaloosd* and has created many hymns and orations for this occasion. However, "Aŕakelo aghavno," the principal hymn of *hokekaloosd*, is ascribed by some to Movses Khorenatsi, and by others to the fifth century Catholicos Hovnan Mantagooni. This same chant is also sung during the Blessing of the Water at Christmas and the baptismal ceremony.

"With a mighty sound from above, the Dove came down like a bright light and armed the apostles with a fire that could not burn them as they sat in the Upper Room."




i nma - noo - tyoon loo - so payl - man hra - zin - yats
ի ևմա - ևու - թիւն լու - սոյ փայլ - ման հրա - զին - եաց
an - gi - ze - li za - sha - gerdsun, minch - teŕ
ան - կի - զե - լի զա - շա - կերտսն, մինչ - դեռ
nus - de - in i soorp ver - na - danun.
ևըս - տէ - ին ի սուրբ վեր - ևա - տաևն:

Սկզբնապէս հաստատուած որպէս հունգքի հանդիսութիւն, Հոգեգալուստը տօնն է առաքեալներու վրայ Ս. Հոգիի իջման: Ս. Ջատկէն յիսուն օր ետք պատահած այս դէպքը Գործք Առաքելոց Բ. գլխուն մէջ կը նկարագրուի, որպէս կրակէ լեզուներու կերպարանքով սաստիկ քամիի մը ձայնին: Ուստի առաքեալները կարելիութիւնը ունեցան խօսելու մէկէ աւելի լեզուներով, որպէսզի տարբեր ազգի պատկանողներ ի վիճակի ըլլային հասկնալու զիրենք: Ներսէս Լամբրոնացի կը հաստատէ թէ Հայերէնը Ս. Թադէոս Առաքեալի խօսած լեզուն էր: Հոգեգալստեան տօնը ճոխացնելու մէջ մեծ նպաստ բերած է Ս. Ներսէս Շնորհալին, որ յօրինած է բազմաթիւ շարականներ եւ ճառեր այս առիթով: Այսուհանդերձ «Առաքելոյ աղաւնոն», Հոգեգալստեան գլխաւոր շարականը, ոմանք կը վերագրեն Մովսէս Խորենացիին, իսկ ուրիշներ՝ Ե. դարու կաթողիկոս Յովնան Մանդակունիին: Այս նոյն շարականը կ'երգուի Ջրօրհնէքի եւ Մկրտութեան կարգի ընթացքին եւս:

«Վերէն ուղղարկուած աղաւնիին, միաձայն հնչումով եւ փայլուն լոյսի նմանութեամբ, վար իջաւ եւ կրակով զինեց սուրբ վերնատան մէջ նստող անկիզելի առաքեալները»:

Vor i lerinn aylagerbyal Որ ի լերինն այլակերպեալ *[Hymn of the Transfiguration]*

It is known that in the Armenian Church, *Vartavar*, or the Feast of Transfiguration, has replaced a pre-Christian rite designed to glorify Asdghig, the goddess of love and beauty. On that occasion garlands of roses were set afire at her statues, thus naming the feast *Vartavar* (burning of the rose). Curiously, on *Vartavar*, rose petals are strewn in the sanctuary. *Vartavar* also glorifies the church, which in spiritual terms is a vessel like Noah's Ark that saved all created beings. To symbolize the Great Flood, water is sprinkled during the service. Furthermore, white doves are let loose in the church to recall the story of the Flood, when one of the birds brought back a living olive branch. "Vor i lerinn aylagerbyal" is the major hymn of the day.

"By Your Transfiguration on the mountain You showed Your Divine power. We give You glory, O Light Divine."





Ծանօթ է թէ հայկական եկեղեցւոյ մէջ Վարդավառը կամ Պայծառակերպութեան տօնը փոխարինած է հեթանոսական արարողութիւն մը, փառաբանելու Աստղիկը՝ սիրոյ եւ գեղեցկութեան դիցուհին: Այդ առիթով, վարդեպսակներ կ'այրէին աւոր արձանին առջեւ, ծնունդ տալով վարդավառ անունին՝ վարդերու վառիլը: Հետաքրքրական է որ Վարդավառի օրը վարդի թերթեր սփռուած կ'ըլլան եկեղեցւոյ մէջ: Վարդավառը նաեւ կը փառաւորէ եկեղեցին, որ հոգեւոր իմաստով աւօթ մըն է Նոյեան տապանին նման, որու միջոցաւ կը փրկուին ստեղծուած բոլոր էակները: Արարողութեան ընթացքին, ջուր կը սրսկուի որպէս խորհրդանշան Ջրհեղեղին: Բաց աստի, ճերմակ աղաւնիներ կ'արձակուին եկեղեցիին մէջ յիշեցնելու Ջրհեղեղին պատմութիւնը, երբ աղաւնին ետ բերաւ ձիթենիի թարմ ճիւղ մը: «Որ ի լերինն այլակերպեալ» շարականը կ'երգուի Վարդավառի օրը եւ յօրինուած է Յովնան Մանդակունիի կողմէ:

«Ցոյց տուիր աստուածային զօրութիւնդ լերան վրայ այլակերպուելով. Քեզի կը փառաւորենք, ո՛վ հոգեւոր լոյս»:

Vork zartaretsin Որք զարդարեցին *[Hymn for the Holy Translators]*

Whereas St. Krikor Loosavorich and King Drtad established Christianity as the official religion in Armenia in the early fourth century, St. Sahag and St. Mesrob, with the support of King Vramshabooh, nationalized Christianity in Armenia. (As the Armenian Apostolic Orthodox Church is a national church, all members enter into the unique Armenian experience; in contrast, to cite an example, individuals associated with the Roman Catholic Church may be part of a multinational setting, such as French, Spanish, or Italian.) St. Mesrob devised the Armenian alphabet in 405, and with St. Sahag he translated the Bible into Armenian, thus launching the Golden Age of Armenian literature. Because of their contribution, the Church has designated a specific day to honor their names. "Vork zartaretsin," a hymn ascribed to Vartan Vartabed of the thirteenth century, enumerates their work in detail, considering it a divine act.

"The Holy Translators, like stewards, were interpreters of the Holy Bible, inventing letters that kept these words alive for the people of the new Israel. Praise God with a sweet-sounding hymn."




uz - kir gen - ta - ni hov - vel uz - hod nor
ըզ - գիր կեն - դա - նի հով - ւել ըզ - հօտ նոր
Is - ra - ye - li; yer - kov kaghts - roo - tyan
Իս - րա - յե - լի. եր - գով քաղց - րու - թեան
hunch - mamp zAsd - vadz orh - nes - tsook.
հընչ - մամբ զԱստ - ուած օրհ - նես - ցուք:

Եթէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ Տրդատ թագաւոր հաստատեցին քրիստոնէութիւնը, որպէս Հայաստանի պաշտօնական կրօնք Դ. դարու սկիզբը, Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Վռամշապուհ թագաւորի աջակցութեամբ քրիստոնէութիւնը ազգայնացուցին Հայաստանի մէջ: Ազգային եկեղեցիի մը մէջ, ինչպէս է Հայկական Առաքելական Ուղղափառ Եկեղեցին, անոր պատկանող բոլոր հաւատացեալները ծագումով եւ կամ համոզումով միազգի կ'ըլլան. որպէս հակադրութիւն յիշենք թէ Հռովմէական Կաթողիկէ Եկեղեցիին պատկանող անհատներ կրնան ազգային տարբեր ինքնութիւն ունենալ, ինչպէս Ֆրանսացի, Սպանացի կամ Իտալացի: Ս. Մեսրոպ Մաշտոց հնարեց հայերէն այբուբենը 405 թուին եւ Ս. Սահակ Պարթեւի գործակցութեամբը Ս. Գիրքը թարգմանեց հայերէնի, այսպէս կերտելով հայկական գրականութեան Ոսկեդարը: Անոնց սատարած կարեւոր նպաստը նկատի առնելով, հայկական եկեղեցին նշանակած է մասնաւոր օր մը յաւերժացնելու անոնց անունները: «Որք զարդարեցին» շարականը, որ կը վերագրուի ԺԳ. դարու պատմագիր Վարդան Վրդ. Արեւելցիի, կը թուէ անոնց գործը մանրամասնօրէն, զայդ նկատելով աստուածային տնօրինութիւն մը:

«Անոնք գեղեցկօրէն բացատրեցին Ս. Գրքին իմաստը ու այս բառերը կենդանի պահելու ցանկութեամբ Նոր Իսրայէլի ժողովուրդին համար գիրեր ստեղծեցին. քաղցրահնչիւն երգերով օրհնենք Աստուածը»:

Ov kerahrash dzaghig Ո՞վ գերահրաշ ծաղիկ *[Hymn of the Assumption]*

The Christian Church holds Mary the Blessed Virgin, Christ's mother, in very high esteem. The Armenian Church devotes several dates in the ecclesiastical calendar to her honor, including Annunciation, Assumption, Conception, Presentation, Discovery of Her Belt and Her Box, and Birth of the Holy Virgin. Only Assumption, however, is treated as one of the five Tabernacle Feast Days, the other four being Christmas, Easter, Transfiguration, and Exaltation of the Holy Cross. This service also includes the Blessing of the Grapes, a ceremony that is also tied to the time of the year as it is to the Feast itself. After the liturgy, grapes in a large tray are blessed by the celebrant and then distributed to the members of the congregation. Traditionally, Armenians were not allowed to consume grapes before this feast day blessing. The hymn "Ov kerahrash dzaghig" is chanted during the Assumption Service.

"O wonderful flower, who brought to us from Eden the sweet smell of eternal life, born of Eve from whom death spread to the universe. We bless and glorify you."





Քրիստոնէական եկեղեցին մեծ յարգանք կ'ընծայէ Քրիստոսի մօր՝ ամենաօրհնեալ Ս. Կոյս Աստուածածնի: Հայկական եկեղեցւոյ օրացոյցին մէջ Ս. Աստուածածնին նուիրուած քանի մը տօներ նշանակուած են, ներառեալ Աւետումը, Վերափոխումը, Յղացումը, Ընծայումը, Գօտիին եւ Տուփին Գիւտը, եւ Ծնունդը: Սակայն միայն Վերափոխումը եկեղեցւոյ հինգ տաղաւարներէն մին կը նկատուի. մնացեալ տաղաւարներն են՝ Ս. Ծնունդը, Ս. Զատիկը, Վարդավառը, եւ Խաչվերացը: Վերափոխման տօնին տեղի կ'ունենայ նաեւ Խաղողօրհնէք, որ առընչութիւն ունի տարուան եղանակին հետ: Ս. Պատարագէն ետք, մեծ ափսէի մը մէջ խաղողը կ'օրհնուի պատարագիչին կողմէ եւ ապա կը բաժնուի հաւատացեալներուն: Աւանդականօրէն, Հայերը արտօնուած չէին խաղող ուտելու օրհնուելէ առաջ: «Ո՛վ գերահրաշ ծաղիկ» շարականը կ'երգուի Վերափոխման արարողութեան միջոցին:

Ո՛վ հրաշալի եւ դրախտաբոյր ծաղիկ, անմահութեան բոյրը տարածուեցաւ բոլորիս մէջ, ծնած Եւայէն, եւ որմէ մահ սփռեցաւ աշխարհի վրայ. Քեզի օրհնութեամբ կը փառաւորենք»:

Zorootyoon soorp khachi Զօրութիւն սուրբ խաչի *[Hymn of the Exaltation]*

Although the cross is a symbol found in many cultures, from ancient India to the American Indians, its most significant use has been among the Christians. It stands for Christ's crucifixion and resurrection, and man's redemption through it. Several days in the Christian calendar have been devoted to its remembrance and celebration: Exaltation of the Holy Cross, Holy Cross of Varak, Discovery of the Cross, and Apparition of the Holy Cross. *Khachverats*, or the Exaltation of the Holy Cross, is a Tabernacle Feast Day in the Armenian Church that incorporates two separate historic events. The first is the pronouncement by Apostle St. James the Great to the crowds as he raised the Cross upon which Christ was crucified: "Christ, we kneel before Your Cross," an initial gesture which elevated the cross to its present position of reverence. St. James was martyred shortly thereafter in 44, and on the site of his decapitation the Armenian Church of St. James in Jerusalem was erected. The second event embodied in the Feast is the rescue of the True Cross from the Persians and its return to Jerusalem in 628 by the Byzantine King Heraclius. During the *khachverats* procession, the Cross is adorned with fragrant leaves of basil (*rahan*)—a "kingly" plant in Greek mythology and a "holy" herb in Hindu religion—which is then distributed to the congregation. The service was greatly elaborated by the seventh century Catholicos Sahag Tsoraporetsi, who created many of the hymns, including "Zorootyoon soorp khachi."

"O Christ, let the power of Your Cross that You lifted up to save the world, keep us from all temptation."

With conviction Հաստատակամ





Թէեւ խաչը խորհրդանիշ մըն է, որ գոյութիւն ունեցած է բազմաթիւ քաղաքակրթութիւններու մէջ՝ Հնդկաստանէն մինչեւ ամերիկեան Հնդիկները, սակայն ամենաճշգրտական գործածութիւնը յատուկ է քրիստոնեաներուն: Խաչը կը խորհրդանշէ Քրիստոսի խաչելութիւնը, յարութիւնը եւ մարդուն փրկագործութիւնը: Քրիստոնեայ եկեղեցւոյ օրացոյցը խաչին նուիրուած քանի մը տօներ ունի՝ Խաչվերաց, Վարագայ Ս. Խաչ, Գիւտ Խաչի եւ Երեւման Ս. խաչի: Խաչվերացը տաղաւար մըն է, որ կը միացնէ երկու տարբեր պատմական դէպքեր: Առաջինը Ս. Յակոբոս Առաքեալի ամբոխի մը առջեւ ըրած յայտարարութիւնն է, երբ ան կը բարձրացնէր Քրիստոսի Խաչը ըսելով, «Ո՛վ Քրիստոս, մենք ծունկի կու գանք քու Խաչիդ առջեւ», սկզբնական պարզ արարողութիւն մը, որ բարձրացուց Խաչը ներկայի ակնածանքին: Երբ Ս. Յակոբոս նահատակուեցաւ 44 թուին, սակայն գլխատման վայրին վրայ կանգնեցաւ Երուսաղէմի Հայոց Ս. Յակոբեանց վանքը: Իսկ երկրորդ դէպքը որ Խաչվերացի հետ կապուած է, Ս. Խաչին Պարսիկներէն ազատագրութիւնը եւ վերադարձն է Երուսաղէմ, 628 թուին, Բիւզանդիոնի Հերակլ թագաւորին կողմէ: Խաչվերացի թափօրի ընթացքին, խաչը կը զարդարուի անուշահոտ ոեհանի տերեւներով, որ ապա կը բաժնուի հաւատացեալներուն: (Ոեհանը յունական դիցաբանութեան մէջ արքայական տունկ մըն է, իսկ հնդկական կրօնքներու մէջ՝ նուիրական բոյս մը:) Խաչվերացի արարողութիւնը խոշոր չափով ընդլայնեցաւ Է. դարու կաթողիկոս Սահակ Գ. Զորափորեցիի կողմէ, որ յօրինեց Խաչի շարականներու մեծ մասը, ներառեալ «Զօրութիւն Ս. Խաչինը»:

«Քրիստոս, սուրբ Խաչիդ զօրութիւնը, զոր կանգնեցիր աշխարհի փրկութեանը համար, թո՛ղ պահպանէ մեզի ամէն փորձութիւններէ»:

Kez Krisdosi gatooghige Քեզ Քրիստոսի կաթուղիկէ *[Hymn of the Cross of Varak]*

Varaka soorp khach, or Holy Cross of Varak, is a uniquely Armenian celebration. According to tradition, St. Hripsime, who escaped to Armenia for disseminating Christianity, carried a splinter of the Cross on herself for protection from her persecutors. Fearing for her life, she hid the relic in a cave near Mount Varak in the Van region. St. Hripsime was martyred in 301. According to the *Haysmavoork* (Menalogion), a medieval compendium of the lives of saints, Mount Varak was illuminated in 660 in the form of twelve columns which then moved down from the mountain and rested in the Monastery of Varak. The entire Armenian population of Van observed this supernatural event and discovered at the base of the illumination the splinter of the Cross which St. Hripsime had hidden in the cave. After several displacements, the relic was finally deposited in the Church of St. Nshan of Van in 1655. "Kez Krisdosi gatooghige," possibly created by the seventh century Catholicos Nerses Ishkhantsi, describes the events of *Varaka soorp khach.*

"To You,O Christ, who gave the Church this victorious sign received by God, we always send up praise in the highest."

In admiration Հիացմամբ





Վարագայ Ս. Խաչի տօնը եզակիօրէն հայկական յիշատակութիւն մըն է: Աւանդութեան համաձայն, քրիստոնէութեան քարոզիչ Ս. Հռիփսիմէ կոյս, երբ Հայաստան եկաւ հալածանքէ պաշտպանուելու համար միասին բերաւ Խաչէն բեկոր մը: Նկատելով որ իր կեանքը վտանգի մէջ էր, ան մասունքը պահեց Վանի շրջանի Վարագայ լերան մօտ գտնուող քարայրի մը մէջ: Ս. Հռիփսիմէ նահատակուեցաւ 301 թուին: *Յայսմաւուրքի* համաձայն, որ Սուրբերու վարքերը պարունակող միջնադարեան հաւաքածոյ մըն է, 660 թուին Վարագայ լեռը լուսաւորուեցաւ տասներկու սիւներով, որոնք լեռնէն վար շարժեցան եւ կանգ առին Վարագայ վանքին առջեւ: Վանի ամբողջ հայ բնակչութիւնը ականատես եղաւ այս գերբնական դէպքին եւ լուսաւորութեան պատուանդանին վրայ գտաւ Խաչին մասունքը, զոր Ս. Հռիփսիմէ պահած էր քարայրին մէջ: Կարգ մը տեղափոխութիւններէ ետք, մասունքը վերջապէս ի պահ դրուեցաւ Վանի Ս. Նշան եկեղեցիին մէջ 1655-ին: «Քեզ Քրիստոսի կաթուղիկէ» շարականը, հաւանաբար յօրինուած Է. դարու կաթողիկոս Ներսէս Գ. Իշխանցիի կողմէ, կը նկարագրէ Վարագայ Ս. Խաչի դէպքերը:

«Քեզի բարձունքներէն միշտ օրհներգութիւններ կը նուիրենք, Քրիստոս, որ ընդհանրական եկեղեցիին շնորհեցիր յաղթական եւ պատուական սուրբ նշանդ՝ ընդունուած Աստուծոյ կողմէ»:

Aysor khntri Այսօր խնդրի *[Hymn for the Discovery of the Cross]*

After His burial, the Cross on which Jesus was crucified was abandoned at the foot of the Mount of Golgotha. Over the years the place was used as a dumping ground and the trace of the Cross lost. The True Cross was discovered by St. Helena, the mother of King Constantine I of Byzantium, in 327 when she went to Jerusalem to visit the Holy Places. According to tradition, there she met a wise Jew, Judas, who acted as a guide and together they dug out three crosses, one belonging to Jesus and the other two to the thieves who were crucified with Him on the same day. To determine the True Cross in turn, they placed a newly deceased baby on each of the three crosses. When he was resurrected by a miracle on the third one, they knew it belonged to Christ. Judas was immediately converted to Christianity, and the Cross was placed in the Church of Holy Sepulcher. "Aysor khntri" is a chant used on *Kyood Khachi* or the Discovery of the Cross.

"Today the pious Queen seeks the precious wood of the Cross placed on Golgotha. Come, faithful, worship the holy sign. "




i tseñn asd - va - dza - ser tush - kho - yin;
ի ձեռն աստ - ու - ծա - սէր դըշ - խո - յին.
ye - gayk ha - va - dats - yalk yer - gur - ba - kes - tsook
ե - կայք հա - ու - տաց-եալք եր - կըր - պա - գես - ցուք
asd - va - dza - yin soorp nu - sha - nis.
աստ - ու - ծա - յին սուրբ ընդ - շա - նիս:

Քրիստոսի թաղումէն ետք, Խաչը որուն վրայ խաչուած էր Ան, լքուեցաւ Գողգոթայի լերան ստորոտը: Տարիներու ընթացքին, վայրը գործածուեցաւ որպէս աղբանոց եւ Խաչին հետքը կորսուեցաւ: Խաչը վերագտնուեցաւ Բիւզանդիոնի Կոստանդին Ա. թագաւորի մօր, Ս. Հեղինէի կողմէ 327-ին, երբ ան Երուսաղէմ գնաց այցելելու սրբավայրերը: Աւանդութեան համաձայն, ան հանդիպեցաւ Յուդա անունով իմաստուն Հրեայի մը, որ ծառայեց որպէս ուղեցոյց: Հեղինէի առաջնորդութեամբ փորեցին աղբանոցը եւ երեւան հանեցին երեք խաչեր՝ մէկը Քրիստոսի պատկանող եւ մնացեալ երկուքը գողերուն, որոնք խաչուած էին Քրիստոսի հետ նոյն օրը: Քրիստոսի Խաչը որոշելու համար, անոնք զետեղեցին նոր մահացած մանուկ մը երեք խաչերէն իւրաքանչիւրին վրայ: Երբ մանուկը հրաշքով ողջնցաւ երրորդ խաչին վրայ, անոնք հաստատեցին թէ այդ կը պատկանէր Քրիստոսի: Յուդան անմիջապէս Քրիստոնեայ դարձաւ եւ Խաչը պահուեցաւ Ս. Յարութեան տաճարին մէջ: «Այսօր խնդրի պատուական» շարականը կ'երգուի Գիւտ Խաչի տօնին օրը:

«Այսօր աստուածասէր թագուհիին ձեռքովը Գողգոթայի վրան ձգուած պատուական խաչափայտը կը փնտռուի. հաւատացեալնե՛ր, եկէ՛ք աստուածային այս նշանին առջեւ երկրպագելու»:

Hrashapaŕ Հրաշապար *[Hymn of Greeting]*

When a bishop visits a city, he is taken first to offer his prayers at the local cathedral, where he is greeted with the hymn "Hrashapaŕ." This stately chant is also sung at the end of the Vesting Hymn, when the celebrant of the Divine Liturgy is a bishop. Additionally, "hrashapaŕ" is intoned on two other occasions, which are related to St. Krikor Loosavorich: *Yeln i virab* (The Deliverance from the Pit), and *Kyood nshkharatsn* (The Discovery of His Relics). The first feast marks the release of St. Krikor from the dungeon at the urging of King Drtad's sister, Princess Khosrovitookhd, in order to cure the king of lycanthropy, a disfiguring disease. The second, a major feast, celebrates the disclosure of his remains to an ascetic, Pasentsi Karnik, in the region of Tortan in 328. His hand, now preserved in a silver encasement, is found in the Etchmiadzin Cathedral, which St. Krikor built in the fourth century.

"Glorious and gracious God! By Your own knowledge You began to save the Armenian people by giving us the Illuminator from the criminal Parthian tribe. Through Him, O Savior, save us now and at Your awesome coming."

With jubilation Ողեւորութեամբ




uz - pur - goo - tyoon Ha - yas - dan - yayts us - guz -
ըզ - փըր - կու - թիւն Հա - յաս - տան - եայց ըս - կըզ -
pna - vor - yal i Bar - te - va - gan me - gha - bard az - ken
բնա - ւոր - եալ ի Պար - թե - ւա - կան մե - ղա - պարտ ազ - գէն
loo - sa - vo - rich mez shnor - he - tser;
լու - սա - ւո - րիչ մեզ շնոր - հե - ցեր.


vasn vo - ro pa - re - kho - soo - tyamp so - ra
վասն ո - րոյ բա - րե - խո - սու - թեամբ սո - րա
pur - gich ge - tso uz - mez ayjhm
փըր - կիչ կե - ցո՛ ըզ - մեզ այժմ
yev i Ko ha - ha - vor ka - lus - dyanun.
եւ ի Քո յա - հա - ւոր գա - լըս - տեանն:

Երբ բարձրաստիճան եկեղեցական մը այցելութեան կ'երթայ այլ վայր մը, ան նախ կ'առաջնորդուի տեղւոյն եկեղեցին աղօթելու եւ կը դիմաւորուի «Հրաշափառ» շարականով: Այս վեհապանծ օրհներգը կ'երգուի նաեւ երբ եպիսկոպոսը թափօրով մուտք կը գործէ եկեղեցի՝ պատարագ մատուցանելու համար: Բաց աստի, «Հրաշափառը» կապուած է երկու տարբեր տօներու հետ, որոնք առընչուած են Ս. Գիրգոր Լուսաւորիչի անձի հետ՝ Ելն ի վիրապ եւ Գիւտ նշխարացն: Առաջին տօնը կը նշէ Լուսաւորչի արգիլարանէն ազատութիւնը, միջամտութեամբը իշխանուհի Խոսրովիդուխտին, որ հաւատալով Լուսաւորիչին բուժարար ոյժին, բերաւ զինքը, որպէսզի դարմանէ իր եղբօրը Տրդատ թագաւորի անարկու հիւանդութիւնը՝ գայլախտութիւնը: Իսկ երկրորդը, որպէս գլխաւոր տօն, կը յիշատակէ Լուսաւորիչի ոսկորներուն յայտնուիլը՝ Բասենցի Գառնիկ ճգնաւորին, 328 թուին Թորդան աւանին մէջ: Ներկայիս, Ս. Գրիգորի Աջը, զետեղուած արծաթեայ պատեանի մէջ, կը պահուի Ս. Էջմիածնի Մայր եկեղեցին, զոր Լուսաւորիչը կառուցած է Դ. դարուն:

«Հրաշալի, փառաւոր եւ միշտ բարեխնամ Աստուած, նախատեսելով հայերու փրկութիւնը մեզի լուսաւորիչ մը շնորհեցիր պարթեւական մեղապարտ սերունդէն. անոր միջնորդութեամբ փրկէ՛ մեզի քու հիանալի գալուստիդ միջոցին»:

Amen Hayi srditz pkhadz Ամէն Հայի սրտից բխած *[Pontifical Hymn]*

Also known as the Pontifical Hymn, "Amen Hayi srditz pkhadz" is an ode of a personal nature, calling on God to bless and protect the Catholicos. It is a stately yet lyrical poem. Although not a liturgical chant, the Pontifical Hymn is closely related to the Church. It was composed at the turn of the century by Komitas.

"God, please hear the words, / Spoken by every Armenian: / Grant our Catholicos a long life, / Give the father of Armenians many days. / Lord, always guard the Mother See / Which You Yourself created."

Majestically, with ardor *Վեհ, ջերմօրէն*




Hay- ra - be - din, yer- gar o - rer Ha - yots
Հայ-րա - պե - տին, եր-կար օ-րեր Հա - յոց
Hor. Der, an - sa- san ba- he too mishd
Հօր: Տէ՛ր, ան - սա-սան պա-հէ՛ դու միշտ
ko isg him - nadz Mayr A - tor.
քո իսկ հիմ - նած Մայր Ա - թոռ:

«Ամէն Հայի սրտից բխածը» Հայրապետական գովերգ մըն է եւ աղերս մը առ Աստուծոյ, օրհնելու եւ պահպանելու կաթողիկոսը: Այս վեհապանծ բայց քնարական բանաստեղծութիւնը թէեւ ծիսական երգ մը չէ, սակայն սերտօրէն կապ ունի եկեղեցիին հետ: Զայն յօրինած է Կոմիտաս Վարդապետ:

«Ո՜վ Աստուած, լսէ՛ ամէն Հայու/Սրտէն բխած այս ձայնը, /Երկար կեանք տո՛ւր Հայրապետին,/ Երկար օրեր /Հայոց Հօր:/ Տէ՛ր, դուն միշտ անսասան պահէ՛/ Քու իսկ հիմնած Մայր Աթոռդ»:

Looys i looso Լոյս ի լուսոյ *[Baptismal Hymn]*

Mgrdootyoon and *gnoonk*, or baptism and chrismation, is the sacrament through which an individual is initiated into Christianity. (The Armenian Church marks seven sacraments that include Baptism, Chrismation, Penance, Holy Communion, Marriage, Holy Orders, and Anointing of the Sick). As articulated by St. Paul in Rom. 2, baptism is the spiritual counterpart of the ritual circumcision practiced by the Jews, serving the means whereby a person experiences the benefits of the Covenant. In the Armenian Church, the ceremony traditionally takes place on the eighth day of an infant's birth. It is sponsored by the godparents, who declare their resolve to participate in the raising of the child in the Christian tradition. Baptism is performed by the priest, who immerses the infant in water and anoints with *myoorn* or Chrism (sacramental oils) his or her body in nine places—forehead, eyes, nose, mouth, ears, heart, back, hands, and feet. Historically, a baptismal name is then bestowed upon the new member of the church. "Looys i looso" is a chant traditionally sung during baptism, as well as at the *chrorhnek* ceremony which symbolizes Christ's Baptism by John the Baptist.

"Light from light! You were sent from the Father and became human through the Holy Virgin, so that Adam who fell would be clean again."




yev marm - na - tsar i soorp Goo - sen,
եւ մարմ - նա - ցար ի Սուրբ Կու - սէն,
zi ve - rus - din no - ro - kes - tses
զի վե - րըս - տին նո - րո - գես - ցես
za - ba - gan - yaln A - tam.
զա - պա - կան - եալն Ա - դամ:

Հայաստանեայց եկեղեցին կ'ընդունի եօթը խորհուրդներ՝ մկրտութիւն, դրոշմ, ապաշխարութիւն, հաղորդութիւն, պսակ, ձեռնադրութիւն եւ հիւանդաց կարգ: Մկրտութիւնը եւ դրոշմը խորհուրդներ են, որոնց միջոցաւ անհատ մը կ'ընդունուի Քրիստոսի անուամբ հաւատացեալներու դասէն ներս: Ինչպէս բացատրուած է Պօղոս Առաքեալի կողմէ (Հռովմ. 29), մկրտութիւնը, որ կը գոյանայ «մկրատ» բառէն, որպէս հոգեւոր թլփատութիւն կը համապատասխանէ Հրեաներու կողմէ կիրարկուած ծիսական թլփատութեան, որով անձ մը Հին ուխտի օգուտները կը քաղէր: Հայկական եկեղեցիին մէջ մկրտութեան արարողութիւնը աւանդականօրէն տեղի կ'ունենայ մանուկին ծնունդէն ութ օր ետք: Ան կ'երաշխաւորուի կնքահօր եւ կնքամօր կողմէ, որոնք կը խոստանան մասնակցիլ մանուկին դաստիարակութեան՝ ըստ քրիստոնէական աւանդութեան: Քահանան կը կատարէ մկրտութիւնը, թաղելով մանուկը ջուրին մէջ եւ միւռոնով օծելով անոր ճակատը, աչքերը, քիթը, բերանը, ականջները, սիրտը, թիկունքը, ձեռքը եւ ոտքերը: «Լոյս ի լուսոյ» շարականը կ'երգուի մկրտութեան եւ նաեւ Զրօրհնէքի արարողութեան ընթացքին, որ կը խորհրդանշէ Քրիստոսի մկրտութիւնը Յովհաննէս Մկրտչի կողմէ:

«Պայծառ լոյս, որ ղրկուեցար Հօր կողմէ եւ մարմնացար սուրբ Կոյսէն, որպէսզի նորէն մաքրես մեղաւոր մարդը»:

Oorakh ler Ուրախ լե՛ր *[Wedding Hymn]*

The sacrament of *Soorp bsag*, or marriage, confirms the union of a man and a woman, with divine sanction. In this regard, matrimony is quite different from early Hebrew laws, in which a woman was considered her husband's property and only the man could divorce his wife. During the wedding ceremony, rings are exchanged as a pledge of eternal commitment or seal of faith. This is a custom dating back to antiquity, which the Church adopted in the second century. Among Armenians, two braided cords made of white, green and red fibers—symbolizing purity, fertility, and blood—called *narod*, are utilized to tie the heads of the bride and the groom, much like the tiara used by other institutions. "Oorakh ler" is a chant by Catholicos Sahag Tsoraporetsi that is identified with the sacrament of *Soorp bsag*.

"Rejoice, O Holy Church! For Christ the King has crowned You today with His Cross and graced Your churches with His wonderful glory."




Kris - dos Ar - kayn
Քրիս - տոս Ար - քայն
yerg - nits ay - sor bu - sag - yats
երկ - նից այ - սօր պը - սակ - եաց
uz - kez kha - chivn yoo - rov; yev
ըզ - քեզ խա - չիւն իւ - րով. եւ


zar - tar - yats za - moo - rus
զար - դար - եաց զա - մու - րըս
ko skan - che - li
քո սքան - չե - լի
pa - rõkn yoo - rovk.
փա - ռօքն իւ - րովք:

Ս. Պսակը կամ Ամուսնութիւնը աստուածային օրինութեամբ այր մարդու եւ կնոջ մէկ մարմին ըլլալը կը հաստատէ: Այս տեսակէտով, քրիստոնէական ըմբռնումը կը տարբերի հրէական, ըստ որուն կին մը իր ամուսնոյն ստացուածքը կը համարուէր եւ միայն այրը կրնար ամուսնալուծել իր կինը: Ս. Պսակի արարողութեան ընթացքին մատանիներ կը փոխանակուին, որպէս յաւիտենական յանձնառութեան խոստում եւ հաւատքի հաւաստիք: Ասիկա սովորութիւն մըն է՝ սկիզբ առած հին ժամանակներու մէջ, զոր եկեղեցին որդեգրած է Բ. դարուն: Հայկական եկեղեցին կ'օգտագործէ նարօտ՝ կարմիր, կանանչ եւ ճերմակ լարերու հիւսուածք մը, կապելու հարսին եւ փեսային գլուխները, ինչպէս եւ թագ, որ կը գործածուի միւս եկեղեցիներու մէջ եւս: «Ուրախ լեր» շարականը՝ յօրինուած Սահակ Կաթողիկոս Զորափորեցիի կողմէ, կ'երգուի Ս. Պսակի խորհուրդի միջոցին:

«Ո՞վ սուրբ եկեղեցի, ուրախացի՛ր որովհետեւ Քրիստոս՝ երկնքի Թագաւորը, այսօր Իր խաչովը քեզի պսակեց եւ քու ամրոցներդ իր սքանչելի փառքովը զարդարեց»:

Kahanayk Քահանայք *[Requiem Hymn]*

Hooghargavorootyoon (literally, "a send-off"), or the rite of Christian burial, is celebrated upon the death of a person and the interment of the body. In the Armenian Church there are several events connected to the funeral customs. *Dan gark* (home service), or wake, is an opportunity for friends and relatives to gather and visit the deceased for the last time to express their sorrow to the bereaved family. *Yegeghetsvo gark* (church service) consists of the reading of the Scripture and prayers, singing of hymns of burial and Christian hope of resurrection, and the delivery of the eulogy. The body is then buried in a grave during *kerezmani gark* (cemetery service). The church traditionally forbids the cremation and the mummification of the body. Following the burial, a meal—*hokejash* (a meal for the soul)—is given by the family to celebrate the deceased's life. Finally, on the Saturday following the burial, as well as forty days after it, friends gather for the *hokehankisd* (repose of the soul) to remember the dead and perpetuate the memory. *Hrooshag*, a dessert made of farina, is served to all. "Kahanayk" is the chant sung at funerals and requiem services and is ascribed to Nerses Shnorhali.

"We, priests and people, pray that You, good and merciful Lord, receive us too, some day, into the city of Jerusalem in heaven with those who have already died in faith. There we will forever sing the praises of the three persons of the Trinity.

With expectation Յուսալիր




un - gal uz - mez no - vin hoo - sov. He - roo - sa - ghem ka - ghak ve - rin,
ըն - կալ ըզ - մեզ նո - վին յու - սով: Ցե - րու - սա - ղեմ քա - ղաք վե - րին,
ho - room ar - tar - kun jho - gho - vin. Parś ver yer - kel mishd unt
յո - րում ար - դար - քըն ժո - ղո - վին: Փառս վեր եր - գել միշտ ընդ
no - sin: yer - ror - too - tyant yer - ryag an - tsin.
նո - սին եր - րոր - դու - թեանդ եր - րեակ աւ - ձին:

Յուղարկաւորութիւն կամ Քրիստոնէական թաղման կարգը կը կատարուի անձի մը մահուան պարագային, երբ անոր մարմինը կը յանձնուի հողին: Հայկական եկեղեցիին մէջ քանի մը դէպքեր կան՝ կապուած յուղարկաւորութեան սովորութեան հետ: Տան կարգը պատեհութիւն կ'ընձայէ ազգականներու եւ բարեկամներու՝ հաւաքուելու եւ յուղարկաւորելու հանգուցեալը եւ յայտնելու իրենց ցաւակցութիւնը սգաւոր ընտանիքին: Եկեղեցւոյ կարգը կը բաղկանայ Ս. Գիրքի ընթերցումէ, աղօթքներէ, դամբանականէ եւ թաղմանական բայց յարութեան քրիստոնէական յոյս ներշնչող շարականներու երգեցողութենէ: Յետոյ, մարմինը կը թաղուի գերեզմանի կարգով: Աւանդականօրէն, եկեղեցին չ'արտօներ թիակիզում, զմռսում եւ կամ դամբանային թաղում: Թաղումէն ետք հոգեճաշ կը տրուի ընտանիքին կողմէ՝ ի յիշատակ հանգուցեալին: Վերջապէս, թաղումին յաջորդող շաբաթ օրը եւ քառասուն օր ետք հանգուցեալին բարեկամները ներկայ կ'ըլլան հոգեհանգստեան արարողութեան՝ յիշելու եւ յաւերժացնելու անոր յիշատակը, երբ երեմուկէ պատրաստուած հրուշակ կը սպասարկուի բոլորին: «Քահանայք» շարականը կ'երգուի յուղարկաւորութեան միջոցին եւ կը վերագրուի Ներսէս Շնորհալիին:

«Տէ՛ր բարեգութ, քահանաներս եւ ժողովուրդս քեզի կ'աղաչենք, որպէսզի հաւատով մեռնողներուն հետ միասին մեզի ալ նոյն յոյսով ընդունիս դրախտային Երուսաղէմ քաղաքին մէջ, ուր հաւատարիմները կը հաւաքուին եւ կ'օրհներգեն երրորդութեանդ փառքը յաւէտ»:

Kta, Der Գթա՛, Տէր *[Martyrs Day Hymn]*

In the Armenian calendar, *meřelots* is a religious occasion that takes place five times a year, on the day following the Tabernacle Feast Days. On *meřelotz* the memory of the deceased is honored and prayers are offered for the soul of the departed faithful by conducting a service and watering the grave at the cemetery. The Armenian *meřelotz* is quite different both in concept and form from the Memorial Day observed in the United States. "Kta, Der" is an appropriate chant that may be sung on *meřelots* or on Martyrs Day, April 24, as well.

"Have compassion, Lord, on the souls of the dead, and remember them with mercy, for You bought them at the cost of your Holy Blood. When the dead rise and stand before Your judgment seat at the wondrous sound of the trumpet, remember them."




moo - tyamp, kan - zi ki - nuk soorp ar -
մու - թեամբ, քան-զի գի - նըք սուրբ ար -
yan ko yen, i hor - jham
եան քո են, ի յոր - ժամ
hra - sha - li tsay - nyoo
հրա - շա - լի ձայ - նիւ



Ըստ հայկական եկեղեցւոյ օրացոյցին, Մեռելոցը կրօնական առիթ մըն է, որ տեղի կ'ունենայ տարին հինգ անգամ՝ տաղաւար տօներու յաջորդող օրը: Մեռելոցի օրը հանգուցեալներուն յիշատակը կը յարգուի եւ աղօթքներ կը կատարուին յաւէտ բաժնուած անձերու հոգիներուն համար, գերեզմանատան մէջ կատարելով արարողութիւն եւ ջրելով գերեզմանները: Հայկական մեռելոցը կը տարբերի թէ՛ ըմբռնումով, թէ՛ ձեւով ամերիկեան Մեռելոց յիշատակութեան օրէն: «Գթա՛, Տէր» շարականը կրնայ երգուիլ Մեռելոցի եւ Նահատակաց տօնին առիթներով:

«Ո՞վ Տէր, երբ փողին հրաշալի ձայնովը մեռելները յարութիւն առնեն եւ կենան քու հիանալի ատեանիդ առջեւ, գթա՛ մեր ննջեցեալներուն հոգիներուն եւ զիրենք յիշէ՛ ողորմութեամբ, որովհետեւ անոնք ալ Քու սուրբ Արեանդ համարժէք են»:

Aŕavod looso Ա՛ռաւոտ լուսոյ *[Nocturnal Hymn]*

In addition to the *sharagnots*, the Armenian Church uses the *Jhamakirk* (Book of Hours). The two together contain all the chants sung during the service, with the exception of the melodies of the Divine Liturgy. "Aŕavod looso," an acrostic chant by Nerses Shnorhali, is sung during the canonical Night Hour. "Aysor anjaŕ," "Nayyats sirov," and "Harevelits," all listed previously, are also found in the Book of Hours.

"Ascending light, almighty justice, let dawn light in me. Born of father, brighten my soul, bring forth the word."





Բացի *Շարականոցէն*, հայկական եկեղեցին կ'օգտագործէ *Ժամագիրքը*: Երկուքը միասնաբար կը պարունակեն արարողութիւններու ընթացքին երգուող երգերուն մեծ մասը, բացի Ս. Պատարագի մեղեդիներէն եւ գանձերէն: «Առաւօտ լուսոյ» շարականը ծայրանուն ոտանաւոր մըն է, որ կ'երգուի գիշերային ժամու ընթացքին: Այս հատորին մէջ նախապէս յիշուած օրհներգներէն «Այսօր անճառ», «Նայեաց սիրով» եւ «Յարեւելից» շարականները կը գտնուին *Ժամագրքին* մէջ:

«Լոյսի առաւօտ, արդար արեգակ, ծագի՛ր իմ մէջս: Հօրմէն սկիզբ առած, հոգիէն բխած, հաճելի խօսքեր երգէ՛»:

Divine Liturgy

Badarak, the Armenian word for Divine Liturgy, has its etymological roots in the Zend word *paytirag*, meaning gift or offering. Zend is the language associated with Zoroastrianism, a religion Armenians practiced prior to Christianity.

The *Badarak* is related to an old Jewish ritual called *chabura* (pron., "khaboora"), which involved the sharing of a meal—breaking bread and passing a cup of wine among friends. In its Christian evolution, *Badarak* symbolizes the Last Supper at which Christ transformed the old ceremony into a new covenant and the bread and wine into His Body and Blood. Its reenactment by the Church is designed not only to relive that event but to share as well in the ongoing redemption that Christ made possible in His sacrifice. The act of the Divine Liturgy thus projects the past occurrence into a present experience, and brings history to life. Through the centuries, the *Badarak* has evolved both in content and context. The liturgy of the Armenian Apostolic Church assumed its final format sometime before 1177, when Nerses Lampronatsi wrote *Megnootyoon khorhoorto Badaraki* (Commentary on the Divine Liturgy), a treatise on Armenian ritual practices. The *Badarak* consists of four parts—Preparation, Synaxis, Holy Sacrifice, and Final Blessing and Dismissal—of which the longest and the most significant portion is the Holy Sacrifice.

Originally, the musical portion of the *Badarak* was sung monophonically, i.e., with a single melodic line, by the clerks. The Italian composer Pietro Bianchini was probably the first to arrange the music of the *Badarak* into a four-part choral setting. Kristofor Kara-Murza and Amy Apcar were among the first Armenians to harmonize the music of the *Badarak*. The arrangement most Armenians are familiar with is that composed by Makar Ekmalian for mixed choir, which is sung almost exclusively in our churches.

A version by Komitas, closer to the spirit of the traditional Armenian Church music, is reserved for men's choir only, to be sung without organ accompaniment. In recent times, numerous new settings of the Divine Liturgy have been created, including those by Edgar Manas, Levon Chilingirian, Ara Bartevian, Parsegh Atmacyan, and Khoren Meikhanedjian, developing further this sacred musical genre.

Սուրբ Պատարագ

Հայերէն պատարագ բառին ստուգաբանական արմատը կը ծագի Զէնտերէն paytirag բառէն, որ կը նշանակէ նուէր կամ ընծայ: Զէնտերէն լեզուն կապուած է զրադաշտական կրօնքին հետ, զոր Հայեր քրիստոնէութենէ առաջ կը պաշտէին:

Պատարագը առընչութիւն ունի հրէական հին ծիսական սովորութեան մը հետ, որ chabura (խապուրա) անուամբ ծանօթ էր եւ կ'ենթադրէր բարեկամներու հետ հաց եւ գինի բաժնել: Քրիստոնէական իմաստաւորմամբ, պատարագը կը խորհրդանշէ Վերջին ընթրիքը, որու ընթացքին Քրիստոս փոխեց հին արարողութիւնը Նոր ուխտի մը, իսկ հաց եւ գինին՝ իր Մարմնին եւ Արիւնին: Եկեղեցւոյ մէջ այս գործողութեան կրկնութիւնը կը մղէ հաւատացեալները վերապրելու Վերջին ընթրիքը եւ մասնակից դառնալու շարունակական փրկագործման, զոր Քրիստոս կարելի դարձուց իր զոհաբերութեամբ: Այսպէսով, Ս. Պատարագի գործողութիւնը անցեալի դէպքը կը վերածէ ներկայի փորձառութեան եւ պատմութիւնը կը դարձնէ այժմէական եղելութեան մը:

Դարերու ընթացքին, Պատարագի պարունակութիւնը եւ բնագիրը փոփոխութեան ենթարկուած են: Առաքելական եկեղեցւոյ Պատարագը իր հիմնական ձեւը ստացաւ նախ քան 1177 թուականը, երբ Ներսէս Լամբրոնացի գրեց իր մասնագիտական հատորը, *Մեկնութիւն խորհրդոյ Պատարագին*: Պատարագը կը բաղկանայ չորս մասերէ՝ Պատրաստութիւն, Ճաշու, Գոհաբանութիւն եւ Արձակում, որոնցմէ ամենաերկարը եւ նշանակալիցը Գոհաբանութեան բաժինն է:

Սկզբնապէս, Պատարագի երաժշտական բաժինը կ'երգուէր միաձայն՝ դպիրներու կողմէ: Իտալացի երգահան Բիէթրօ Պիանքինի հաւանաբար առաջինն էր, որ հայկական Պատարագի երաժշտութիւնը դասաւորեց քառաձայն խմբերգային ձեւի: Քրիստափոր Կարա-Մուրզա եւ Ամի Աբգար զայն դաշնաւորող առաջին հայերը եղան: Խառն դպրաց դասու համար Մակար Եկմալեանի մշակած Պատարագը, որ առհասարակ կ'երգուի մեր եկեղեցիներուն մէջ, ժողովուրդին ամէնէն ծանօթ փոփոխակն է:

Հայկական աւանդական երաժշտութեան ոգիին թերեւս աւելի մօտ է Կոմիտաս Վարդապետի տարբերակը, որ գրուած է արական ձայնի համար ու պէտք է կատարուի առանց երգեհոնի ընկերակցութեամբ: Վերջին ժամանակներուն Ս. Պատարագի բազմաթիւ նոր դաշնաւորումներ յօրինուած են, օրինակ՝ Էտկար Մանասի, Արա Պարթեւեանի, Բարսեղ Աթմաճեանի եւ Խորէն Մէյխանէճեանի գործերը, որոնց մէջ ջանք տարուած է աւելի եւս ճոխացնելու այս սրբազան երաժշտութիւնը:

Khorhoort khorin Խորհուրդ խորին *[Hymn of Vesting]*

"Khorhoort khorin" is a hymn chanted during the vesting of the celebrant, whose entrance into the sanctuary culminates in the words "Takavor yergnavor." The acrostic text spells the name of the poet-musician Khachadoor Daronetsi, who administered the Haghardzin Monastery (near Dilijan) at the turn of the thirteenth century. According to certain sources, Father Khachadoor created it on the occasion of an open-air liturgy organized at the request of Prince Zakaria, who commanded the army that freed Northeastern Armenia from the Seljuks in 1206. After referring to the Creation, the Original Sin, and Christ's salvation of mankind, "Khorhoort khorin" alludes to various parts of the clerical vestment—the belt, the cuffs, the stole, and the cope—in a metaphorical context. On special occasions, it is introduced through a highly florid solo melody.

"Deep mystery, mystery that always was: You have adorned heaven as a home for Your supreme light and graced the angels with splendid glory. Heavenly King, keep Your church whole and all who worship You in peace."

In awe *Ակնածանքով*









With determination Հաստատ կերպով





«Խորհուրդ խորին» շարականը կ'երգուի պատարագիչին զգեստաւորման ընթացքին, որուն եկեղեցի մուտքէն ետք կը հնչէ «Թագաւոր երկնաւորը»: Բանաստեղծութեան իւրաքանչիւր տունի առաջին գիրը կը կազմէ անունը հեղինակ Խաչատուր Տարօնացիի, որ վարեց Հաղարծին վանքի առաջնորդութիւնը (Տիլիճեանի մօտ) ԺԳ. դարու սկիզբը: Ըստ որոշ արձանագրութիւններու, Խաչատուր Վարդապետ յօրինեց այս շարականը բանակային վրանի տակ մատուցուելիք պատարագի մը համար՝ կազմակերպուած 1206-ին հիւսիս-արեւելեան Հայաստանը Սելճուգներէն ազատագրող բանակի հրամանատար՝ իշխան Զաքարիայի խնդրանքով: Ակնարկելով ստեղծագործութեան, ադամական մեղքին եւ Քրիստոսի փրկագործութեան, «Խորհուրդ խորին» շարականը այլաբանական իմաստով ապա կը մատնանշէ եկեղեցական զգեստին զանազան մասերը՝ շուրջարը, փորուրարը եւ բազպանը: Մասնաւոր առիթներու, «Խորհուրդ խորինին» առաջին տունը կ'երգուի գեղգեղուն եւ հանդիսաւոր եղանակով:

«Անհասանելի եւ անսկիզբ, խորունկ խորհուրդ, դուն արքայութիւնդ անմար լոյսերով զարդարեցիր, ու հրեշտակներդ սքանչելի փառքով շքեղացուցիր: Երկնային Թագաւոր, ամուր պահէ՛ եկեղեցիդ եւ խաղաղութիւն տո՛ւր այն բոլորին որոնք Քեզ կը պաշտեն»:

Soorp Asdvadz Սուրբ Աստուած *[Trisagion]*

"Soorp Asdvadz," or "Trisagion" ("thrice holy" in Greek), is a glorification of God the Son who became incarnate as Jesus. When it is sung, the celebrant elevates the Holy Gospel with both arms to symbolize this adoration. "Soorp Asdvadz" is chanted during the Synaxis, the portion of the service preceding the Holy Sacrifice, when people not fully initiated into Christian faith (i.e., not baptized) were, in earlier times, still allowed to be present in the sanctuary. The first reference to "Soorp Asdvadz" is traced to the Ecumenical Council of Chalcedon in 451. (The contemporary name for Chalcedon is Kadiköy, a suburb of Istanbul.) The version used in the Armenian Church, with the added text, "who was crucified for us," was devised by Peter the Fuller, the Patriarch of Antioch, in the late fifth century. "Soorp Asdvadz" is sung with an alternate text on different Feast days; the version given below is the one most often heard.

"Holy God, holy and mighty, holy and immortal, who was crucified for us, have mercy."

With admiration Հիացումով





«Սուրբ Աստուածը» փառաբանութիւնն է Աստուծոյ Որդիին, որ մարմնացաւ որպէս Յիսուս Քրիստոս: Երգեցողութեան ընթացքին, պատարագիչը կը բարձրացնէ Ս. Աւետարանը երկու ձեռքով՝ խորհրդանշելու Աստուծոյ փառաբանութիւնը: «Սուրբ Աստուածը» կ'երգուի Ճաշու ժամուն, որ Գոհաբանութիւնը կանխող արարողութիւնն է: Ճաշու ժամը փոխարինած է հին դարերու Երախայից պատարագը, որ մկրտութեան խորհուրդին համար պատրաստուող անձերուն հոգեւոր սնունդ մատակարարող մասնաւոր արարողութիւն մըն էր: Առաջին ակնարկութիւնը «Սուրբ Աստուածին» կը կատարուի 451-ին Քաղկեդոնի մէջ գումարուած տիեզերական ժողովին: (Քաղկեդոնի ժամանակակից անունը Գատըքէօյ է՝ Իսթանպուլի արուարձաններէն:) Հայկական եկեղեցիին մէջ գործածուող «Սուրբ Աստուածի» յաւելուածական բնագրով տարբերակը, «Որ խաչեցար վասն մեր», գրուած է Անտիոքի պատրիարք Պետրոս Թափիչի կողմէ Ե. դարու վերջը: «Սուրբ Աստուածի» բնագրին այս մասը փոփոխութեան կ'ենթարկուի տօնական օրերու համաձայն:

«Սուրբ Աստուած, սուրբ եւ զօրեղ, սուրբ եւ անմահ, որ խաչուեցար մեզի համար, գթա՛ մեզի»:

Havadamk Հաւատամք *[The Nicene Creed]*

"Havadamk," or the Creed, is a formal statement of the basic tenets of Christian faith. The doctrine was formulated in 325 in Nicaea (now Iznik, known for its exquisite tiles made mostly by Armenian artisans) and finalized in 381 in Constantinople during the Ecumenical Councils, convened there to address certain heretical issues. The Armenian representative to the Nicene Council was the son of Catholicos St. Krikor Loosavorich, St. Arisdages Bartev, who fostered the spread of Christianity in Armenia. In the Armenian Apostolic Orthodox Church, the faithful recite it with their hands joined in front of their chest. The chant is without melodic interest, so as to focus the reciter's attention on the text.

"We believe in one God, the Father almighty, who made heaven and earth, all that is seen and unseen. And in one Lord Jesus Christ, the only Son of God, the same as the Father in every way. For He is God, light, true God, and has the same nature as the Father who made everything in heaven and on earth, the things seen and unseen. For our salvation, He came down from heaven and became human and was born perfectly to the Holy Virgin Mary by the Holy Spirit. And He was truly human in every way, not just in appearance. He suffered and was crucified and was buried and rose again on the third day and ascended into heaven with the same body and sat at the right hand of the Father. He will come again with that same body and with the glory of the Father to judge the living and the dead. We believe also in the Holy Spirit, who is perfect and eternal and spoke through the Law and the Prophets and in the Gospel, who appeared at the Jordan River, preached in the apostles and lived in the saints. We believe also in only one universal, apostolic, and holy church. In one baptism for the forgiveness and cleansing of sin. In the resurrection of those who have died, in God's judgment of us, and in eternal life."

Like a recitative Որպէս ասերգութիւն




Yev i mi Der Hi - soos Kris - dos, Hor - tin as - doo - dzo,
Եւ ի մի Տէր Յի - սուս Քրիս - տոս, յՈր - դին Աս - տու - ծոյ՝
dzun - yaln hAs - doo - dzo Ho - re, mi - a - dzin,
ծըն - եալն յԱս - տու - ծոյ Հո - րէ, մի - ա - ծին՝
ay - sinkn he - oo - te - ne Hor. Asd - vadz hAs - doo - dzo,
այ - սինքն յԷ - ու - թե - նէ Հօր: Աստ - ուած յԱս - տու - ծոյ,



looys i loo - so, Asd-vadz jush - ma - rid hAs-doo-dzo jush-mar-de,
լոյս ի լու - սոյ, Աստ-ուած ճըշ - մա - րիտ յԱս - տու - ծոյ ճըշ-մար-տէ,
dzu-noont yev voch a - ra - radz; nooyn inkn i pnoo - te - ne Hor,
ծը-նունդ եւ ոչ ա - րա - րած. նոյն ինքն ի բնու - թե - նէ Հօր,
vo - rov a - me-nayn inch ye-ghev her-gins yev i ve - ra yerg - ri,
ո - րով ա - մե-նայն ինչ ե - ղեւ յեր-կինս եւ ի վե - րայ երկ - րի,



ye - re - ve - lik yev a - ne - re - vooytk.
Ե - րե - ւե - լիք եւ ա - ՚ն - րե - ւոյթք:
Vor ha - gha - kus mer mart - gan yev va - sun me - ro
Որ յա - ղա - գըս մեր մարդ - կան եւ վա - սըն մե - րոյ
pur - goo - tyan ich - yal i herg - nits marm - na - tsav;
փըր - կու - թեան իջ - եալ ի յերկ - ՚նից՝ մարմ - ՚նա - ցաւ.



mar - ta - tsav, dzu - nav ga - da - re - la - bes
մար - դա - ցաւ, ծը - ննաւ կա - տա - րե - լա - պէս
i Mar - ia - ma sur - po Goo - sen Hok - vovn sur - pov.
ի Մար - իա - մայ սըր - բոյ Կու - սէն Հոգ - ւովն Սըր - բով:
Vo - rov e - ar mar - min, ho - ki yev mid
Ո - րով է - ատ մար - մին, հո - գի եւ միտ


yev za - me - nayn vor inch e i mart,
եւ զա - մե - նայն որ ինչ է ի մարդ,
jush - mar - da - bes yev voch gardz - yok. Char - char - yal,
ճըշ - մար - տա - պէս եւ ոչ կարծ - եօք: Չար - չար - եալ,
khach - yal, tagh - yal, her - rort a - voor ha - roots - yal,
խաչ - եալ, թաղ - եալ, յեր - րորդ ա - ւուր յա - րուց - եալ,


yel - yal i her - gins no - vin marm - novn, nus - dav unt ach - me Hor.
ել - եալ ի յեր - կինս նո - վին մարմ - նովն, նըս - տաւ ընդ աչ - մէ Հօր:
Ka - lots e no - vin marm - novn yev pa - rok Hor
Գա - լոց է նո - վին մարմ - նովն եւ փա - ռօք Հօր
i ta - del zgen - ta - nis yev zmer - yals,
ի դա - տել զկեն - դա - նիս եւ զմեռ - եալս


vo - ro ta - ka - vo - roo - tyann voch ko vakh - jan.
որ - ոյ թա - գա - ւո - րու - թեանն ոչ գոյ վախ - ճառ:



Ha - va - damk yev i Soorp Ho - kin,
Հա - ւա - տամք եւ ի Սուրբ Հո - գին՝


ha - neghn yev i ga - dar - yaln, vor kho - se - tsav
յա - ղեղն եւ ի կա - տար - եալն, որ խո - սե - ցաւ


ho - re - nus yev i mar - ka - res yev hA - ve da - rans.
յո - րէ - նըս եւ ի մար - գար - էս եւ յԱ - ւե - տա - րանն:
Vor echn i Hor - ta - nan, ka - roz - yats ha - rak - yalsun,
Որ էջն ի Յոր - դա - նան, քա - րոզ - եաց յա - ռաք - եալսն,
yev pu - na - ge - tsav i soorpsun. Ha - va - damk yev i mi mi - ayn
եւ բո - նա - կե - ցաւ ի սուրբսն: Հա - ւա - տամք եւ ի մի մի - այն


unt - han - ra - gan yev a - ra - ke - la - gan soorp Ye - ge - ghe - tsi.
ընդ - հան - րա - կան եւ ա - ռա - քե - լա - կան սուրբ Ե - կե - ղե - ցի:
I mi mu - gur - doo - tyoon ha - bash - kha - roo - tyoon
Ի մի մը - կըր - տու - թիւն յա - պաշ - խա - րու - թիւն
i ka - voo - tyoon yev i to - ghoo - tyoon me - ghats.
ի քա - ւու - թիւն եւ ի թո - ղու - թիւն մե - ղաց:


I ha - roo - tyoonn me - re - lots,
Ի յա - րու - թիւնն մե - ռե - լոց
i ta - das - dan ha - vi - de - nits
ի դա - տաս - տան յա - ւի - տե - նից
hok - vots yev marm - nots, har - ka - yoo - tyoonn yerg - nits
հոգ - ւոց եւ մարմ - նոց, յար - քա - յու - թիւնն երկ - նից



«Հաւատամքը» կամ Հանգանակը քրիստոնէական հաւատքի հիմնական սկզբանքներու պաշտօնական յայտարարութիւնն է: Անիկա բանաձեւուեցաւ 325 թուին Նիկիոյ մէջ (ներկայիս՝ Իզնիք, որ ծանօթ է իր ընտիր ճենապակիներով, շինուած առաւելաբար հայերու կողմէ), որ վերջնական ձեւ ստացաւ 381-ին Կ. Պոլսոյ տիեզերական ժողովի ընթացքին, գումարուած՝ քննելու համար կարգ մը հերետիկոսական հարցեր: Նիկիոյ ժողովին հայկական եկեղեցւոյ ներկայացուցիչն էր Ս. Արիստակէս Պարթեւ, Ս. Գրիգոր Լուսաւորիչի որդին, որ նպաստեց Հայաստանի մէջ քրիստոնէութեան տարածման: Հայկական եկեղեցիին մէջ, հաւատացեալները կ'արտասանեն Հանգանակը իրենց ձեռքերու միացումով: Փոխանակ երգուելու, «Հաւատամքը» եղանակով կ'ասմունքուի, որպէս զի հաւատացեալներուն ուշադրութիւնը կեդրոնանայ անոր բնագրին վրայ:

«Կը հաւատանք մէկ Աստուծոյ, ամենակարող Հօր որ ստեղծողն է երկնքի եւ երկրի, տեսանելիներուն եւ անտեսանելիներուն: Եւ մէկ Տէր Յիսուս Քրիստոսի, Աստուծոյ Որդիին՝ ծնած Հայր Աստուծմէ, միածին՝ այսինքն Հօրը էութենէն: Աստուած՝ Աստուծմէ, լոյս՝ լոյսէն, ճշմարիտ Աստուած, ճշմարիտ Աստուծմէ, ծնունդ եւ ոչ արարած: Նոյնինքն Հօրը բնութենէն որով եղաւ ամէն բան երկինքի մէջ եւ երկրի վրայ, տեսանելի եւ անտեսանելի: Որ մեզի՝ մարդոց համար, եւ մեզ փրկելու նպատակով իջաւ երկինքէն՝ մարմնացաւ. մարդացաւ, կատարեալ կերպով ծնաւ Սուրբ Կոյս Մարիամէն՝ Սուրբ Հոգիով: Որով առաւ մարմին, հոգի եւ միտք եւ ամէն ինչ որ կայ մարդուն մէջ, ճշմարտապէս եւ ոչ թէ կարծիքով: Չարչարուեցաւ, խաչուեցաւ, թաղուեցաւ, երրորդ օրը յարութիւն առաւ, երկինքը ելաւ նոյն մարմնով, նստաւ Հօրը աջ կողմը: Պիտի գայ նոյն մարմնով եւ Հօրը փառքով՝ դատելու ողջերը եւ մեռածները որուն թագաւորութիւնը վերջ չունի: Կը հաւատանք նաեւ Սուրբ Հոգիին, անստեղծ եւ կատարեալ, որ խօսեցաւ Օրէնքին, Մարգարէներուն եւ Աւետարաններուն մէջ: Որ իջաւ Յորդանան, քարոզեց առաքեալներուն եւ բնակեցաւ սուրբերուն մէջ: Կը հաւատանք նաեւ միակ, ընդհանրական, առաքելական եւ սուրբ եկեղեցիին, մէկ մկրտութեան, ապաշխարութեան, մեղքերու քաւութեան եւ թողութեան, մեռելներու յարութեան, հոգիներու եւ մարմիններու յաւիտենական դատաստանին, երկինքի թագաւորութեան եւ յաւիտենական կեանքին:»

Marmin deroonagan Մարմին տէրունական *[Hymn of the Great Entrance]*

"Marmin deroonagan," or Hymn of the Great Entrance, marks the beginning of the Holy Sacrifice portion of the Divine Liturgy. The Great Entrance also alludes to Christ's entry into Jerusalem, where the Cross became the altar of His sacrifice. It is sung during a solemn procession in which the eucharistic bread and wine are carried to the altar. According to Armenian custom, the bread (*nshkhar* in Armenian), which symbolizes Christ's body, is unleavened and is prepared with unbleached wheat flour. Round and flat, it is embossed with a cruciform design. The red wine (*kini*), signifying Christ's blood, is pure and undiluted with water.

"The Body and Blood of the Lord are laid up for us. The angels in heaven are ever singing: Holy, holy, holy, Lord of hosts."




yer - gna - yin zo - roo - tyoonk ha - ne - re - vooyts
եր - կնայ - ին զո - րու - թիւնք յա - ղե - րե - ւոյթս
yer - ken yev a - sen an - han - kisd par - paṽ - ov;
եր - գեն եւ ա - սեն ան - հան - գիստ բար - բառ - ով.
Soorp, soorp, soorp, Der zo - roo - tyants.
Սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զո - րու - թեանց:

«Մարմին տէրունականը» կամ Մեծ մուտքի երգը Ս. Պատարագի Գոհաբանութեան բաժնին սկիզբը կը նշէ: Մեծ մուտքը կ'ակնարկէ նաեւ Քրիստոսի Երուսաղէմ մուտքին, ուր խաչը եղաւ անոր զոհաբերութեան խորանը: Ասիկա կ'երգուի հանդիսաւոր թափօրի մը ընթացքին, երբ Ս. Հաղորդութեան հացը եւ գինին կը բերուին խորան: Հայկական սովորութեան մէջ, հացը՝ նշխարը, կը խորհրդանշէ Քրիստոսի Մարմինը, որ անխմոր է եւ կը պատրաստուի ցորենի ալիւրէ. կլոր եւ տափակ նշխարը դրոշմուած է խաչանշանով: Կարմիր գինին, որ կը ներկայացնէ Քրիստոսի Արիւնը, անապակ է՝ առանց ջուրի հետ խառնուած ըլլալու:


«Տիրոջ Մարմինը ու փրկարար Արիւնը մեր առջեւ դրուած են. երկնքի հրեշտակները անյայտնաբար կ'երգեն եւ անդադար կ'ըսեն՝ սուրբ, սուրբ, սուրբ, զօրքերու Տէրը»:

Krisdos i mech mer Քրիստոս ի մէջ մեր *[Hymn of the Kiss of Peace]*

"Krisdos i mech mer," also known as the Hymn of the Kiss of Peace, is chanted while a ceremonial embrace is exchanged by the members of the congregation. The Kiss of Peace is a ritual gesture in which emphasis is upon Christian love and unity. Originally an actual kiss, it is now a bow, to the left and to the right of the person being greeted, practiced now only in the Armenian Church. Received from the priest, it is carried by the deacon to each member of the faithful, who salutes his or her immediate neighbor with the following exchange: "Krisdos i mech mer haydnetsav," "Orhnyal e haydnoot-yoonn Krisdosi." ("Christ is revealed among us," "Blessed be the revelation of Christ.")

"Christ has made Himself known to us, He is God and is here with us. The voice of peace has sounded, and a holy greeting asked of us. Priests, lift your voices, give blessing together, to God to whom the angels sing, and call 'Holy, holy...'"

Joyfully Ուրախական




Soorp vogh choo - ni hra man du - vav. Art bash - don - yayk
Սուրբ ող - ջու - ն hրա - ման տո - ւաւ: Արդ պաշ - տօն - եայք
par - tsyal uz - tsayn, Dook zorh - noo - tyoon i mi pe - ran,
բար - ձեալ ըզ - ձայն, Տո՛ւք զօրհ - նու - թիւն ի մի բե - րան,
Mi - as - na - gan Asd - va - dzoo - tyan;
Մի - աս - նա - կան Աստ - ուա - ծու - թեան.



«Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» երգը ծանօթ է նաեւ որպէս Խաղաղութեան համբոյր եւ կ'երգուի մինչ արարողական ողջագուրումը կը փոխանակուի եկեղեցւոյ անդամներուն կողմէ: Խաղաղութեան համբոյրը գործողութիւն մըն է, ուր շեշտը քրիստոնէական սիրոյ եւ միութեան վրայ կը դրուի: Թէեւ սկզբնապէս իրական համբոյր մըն էր, սակայն ներկայիս ան խոնարհում մըն է՝ ողջագուրուողին աջ եւ ձախ կողմը: Ողջոյնը սարկաւագը կը ստանայ պատարագիչէն եւ ապա բեմէն վար իջնելով՝ կը փոխանցէ ներկայ գտնուող հոգեւորականի կամ սարկաւագի մը, եւ կամ անոնց բացակայութեան դպրապետին, որ իր կարգին կ'ողջունէ ամէնէն մօտ գտնուող հաւատացեալը: Ապա ամէն հաւատացեալ հետեւեալ նախադասութիւնով կ'ողջունէ իր քով գտնուող անձը, «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ», որ կը պատասխանէ «Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի» բառերով:

«Քրիստոս, որ Աստուած է եւ յայտնուեցաւ մեր մէջ, նստած է հոս: Խաղաղութեան ձայնը հնչեց եւ սուրբ ողջոյնի հրաման տրուեցաւ: Եկեղեցւոյ ծառանե՛ր, ձեր ձայնը հիմա միասնաբար բարձրացնելով փառաբանեցէ՛ք համագոյ աստուածութիւնը, որուն համար սերովբէները սուրբ խօսք կ'ըսեն»:

Soorp, soorp Սուրբ, սուրբ *[Anamnesis]*


"Soorp, soorp," analogous to the Latin Sanctus, is sung during the Eucharistic Prayer. It provides a climactic counterpoint to the celebrant's silent supplication. At the conclusion of "Soorp, soorp," while facing the altar, the celebrant raises high the offered bread and chalice full of wine and intones aloud "the words of institution" as recorded in Matthew 26:26-28: "Take, eat; this is my body, which is distributed for you and for many, for the expiation and remission of sins." "Drink ye all of this; this is my blood of the new covenant, which is shed for you and for many for the expiation and remission of sins." The musical version given here is by Komitas.

"Holy, holy, holy, Lord of hosts, Heaven and earth are full of Your glory. You are the highest blessing. What a great blessing You are, You who came and will come again. Hosanna in the highest!"



With enthusiasm Ոգեւորութեամբ





Piously Պաշտաւնքով



«Սուրբ, սուրբ» երգը կ'երգուի Գոհութեան աղօթքի միջոցին: Ան պատարագիչին լուռ աղաչանքներուն համապատասխանող զգացական զեղում մը կը հանդիսանայ: «Սուրբ, սուրբի» վերջաւորութեան, պատարագիչը իր դէմքը դարձուցած խորանին, վեր կը բարձրացնէ հացը եւ գինիով լեցուն սկիհը, եւ կ'արտասանէ Վերջին ընթրիքին Յիսուսի ըսած խօսքերը. «Առէ՛ք, կերէ՛ք, այս իմ մարմինս է, որ կը բաժնուի ձեզի եւ շատերու համար մեղքերու քաւութեան եւ թողութեան ի հանդիր», «Խմեցէ՛ք ասկէ բոլորդ ալ, ասիկա իմ արիւնս է Նոր ուխտի, որ կը թափուի ձեզի եւ շատերու համար մեղքերու քաւութեան եւ թողութեան ի հանդիր»: Վերեւ տրուած փոփոխակը Կոմիտաս Վարդապետինն է:

«Սուրբ, սուրբ, սուրբ, զօրքերու Տէր, երկինք եւ երկիր քու փառքովդ լեցուն են: Բարեբանութիւն բարձունքներուն մէջ: Օրհնուած ես Դուն, որ եկար եւ պիտի գաս Տիրոջ անունովը: Փառաբանութիւն բարձունքներուն մէջ»:

Hayr mer Հայր մեր *[The Lord's Prayer]*

"Hayr mer," also known as "Deroonagan aghotk" (The Lord's Prayer), has a central role in Christian devotion. In the Armenian tradition, all liturgical services begin and end with "Hayr mer," introduced with the phrase "Blessed is our Lord, Jesus Christ. Amen." The text of the Lord's Prayer is from Matt. 6:9-13. It is divided into the address and seven petitions, the first three asking for the glorification of God, the latter four being requests for the essential physical and spiritual needs of human beings. In this collection two versions of the melody are given: the first is the familiar Ekmalian variant, and the second the exquisite Komitas version.

"Our father in heaven, may Your Holy name be honored; may Your Kingdom come; may Your will be done on earth as it is in heaven. Give us today the food we need; forgive us the wrongs we have done, as we forgive the wrongs that others have done to us; do not bring us to hard testing; but keep us safe from Evil."

Lofty, mysteriously Վեհ, խորհրդաւոր

EKMALIAN




ye - ghi - tsin gamk ko, vor - bes her - gins yev
ե - ղի - ցին կամք քո, որ - պէս յեր - կինս եւ
her - gri. Zhats mer ha - na - ba - zort door mez
յեր - կրի: Ձհաց մեր հա - նա - պա - զորդ տո՛ւր մեզ
ay - sor; togh mez uz - bar - dis mer, vor - bes
այ - սօր. թող մեզ ըզ - պար - տիս մեր, որ - պէս


yev mek to - ghoomk me - rots bar - da - ba - nats;
եւ մեք թո - ղումք մե - րոց պար - տա - պա - նաց.
yev mi da - nir zmez i por - tsoo - tyoon;
եւ մի՛ տա - նիր զմեզ ի փոր - ձու - թիւն.
ayl pur - gya i cha - re.
այլ փըր - կեա՛ ի չա - րէ:

In a lofty manner Վսեմաբար

KOMITAS




Zhats mer ha - na - ba - zort door mez ay - sor;
Ջհաց մեր հա - նա - պա - զորդ տո՛ւր մեզ այ - սօր.
togh mez uz - bar - dis mer, vor - bes yev mek
թող մեզ ըզ - պար - տիս մեր, որ - պէս եւ մեք
to - ghoomk me - rots bar - da - ba - nats;
թո - ղումք մե - րոց պար - տա - պա - նաց.



«Հայր մերը՝» ծանօթ նաեւ որպէս Տէրունական աղօթք, հիմքն է քրիստոնէական պաշտամունքին: Հայկական եկեղեցւոյ աւանդութեան մէջ բոլոր ծիսական արարողութիւնները կը սկսին եւ կը վերջանան «Հայր մերով» եւ անոր կցուած «Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն» նախադասութեամբ: Տէրունական աղօթքի բնագիրը առնուած է Մատթէոս աւետարանէն եւ բաժնուած՝ եօթը խնդրանքներու. առաջին երեքը կը թելադրեն Աստուծոյ փառաբանութիւնը, իսկ մնացեալ չորսը կապ ունին մարդկային էակներու ֆիզիքական եւ հոգեկան էական կարիքներուն հետ: Սոյն գրքին մէջ դրուած են «Հայր Մերի» երկու տարբեր եղանակներ, առաջինը՝ Եկմալեանինն է, իսկ երկրորդը Կոմիտաս Վարդապետինը:

«Ո՛վ մեր Հայրը, որ երկինքի մէջ ես, քու անունդ սուրբ ըլլայ. քու թագաւորութիւնդ գայ. քու կամքդ ըլլայ, ինչպէս երկինքի մէջ նոյնպէս ալ երկրի վրայ: Մեր օրական հացը այսօր մեզի տո՛ւր. եւ ներէ՛ մեր պարտքերը, որպէսզի մենք ալ ներենք մեր պարտականներուն. եւ մեզի փորձութեան մի՛ տանիր. այլ չարէն ազատէ՛»:

Der voghormia Տէր, ողորմեա՛ *[Chant of Supplication]*

"Der, voghormia" is not, strictly speaking, part of the Divine Liturgy proper. The complete text was authored by the eighteenth century Catholicos Simeon of Yerevan and was published in 1772 in his *Kirk aghotits vor gochi zposaran hokevor* (Prayer Book, Also Entitled Spiritual Refreshment). In addition to his administrative duties, Catholicos Simeon was also known for his zeal towards education; he founded the Etchmiadzin Press and revived the Etchmiadzin School. "Der, voghormia" is sung during the ministration of Communion to the clergy, which takes place behind the closed altar drape and before the faithful receive Holy Communion. In the Armenian Church, the method of partaking the Communion is by intinction, i.e., steeping the bread in wine, in order to minister the consecrated elements of the Eucharist together.

"Lord have mercy."





«Տէր, ողորմիա՛ն» իրականութեան մէջ Ս. Պատարագի մաս չի կազմեր: Անոր հեղինակն է ԺԸ. դարու կաթողիկոս Սիմէոն Երեւանցի, որ առաջին անգամ հրատարակած է զայն 1772-ին *Գիրք աղօթից որ կոչի զբօսարան հոգեւոր* հատորին մէջ: Բացի իր վարչական պարտականութիւններէն, Սիմէոն Կաթողիկոս անուն շահած էր ուսման հանդէպ տածած իր ջերմ եռանդով: Ան հիմնեց Ս. Էջմիածնի տպարանը եւ վերակենդանացուց Ս. Էջմիածնի դպրոցը: «Տէր, Ողորմիա՛ն» կ'երգուի երբ խորանը վարագոյրով ծածկուած է հաւատացեալներու տեսողութենէն: Այդ միջոցին պատարագիչ հոգեւորականը կը հաղորդուի եւ վարագոյրը բացուելէ ետք Ս. Հաղորդութիւն կը մատուցանէ հաւատացեալներուն: Հայկական եկեղեցւոյ մէջ Ս. Հաղորդութիւնը թաթախումով է, այսինքն՝ հացը կը թաթխուի գինիին մէջ, որպէս զի օրհնուած տարրերը միասնաբար մատուցուին ժողովուրդին:

«Տէր, գթա՛ մեզի:»

Krisdos badarakyal Քրիստոս պատարագեալ *[Hymn of Communion]*

"Krisdos badarakyal" is the anthem chanted before the ministration of Holy Communion, a sacrament given to those who are absolved of their sins by confessing. The ancient practice of the Church required Christians to confess their sins either openly before the congregation or, later, privately with a priest. Private confession is still practiced by the Roman Catholic and Eastern Orthodox Churches, but the Armenian Church joins other traditions in practicing group confession. Some members of the church undertake confession at regular intervals as a discipline, and others as a means of easing a conscience burdened with guilt for some specific offence, whether committed in thought, word, or deed, willingly or unwillingly.

"Blessed is the Lord. Christ gave Himself for us all. Alleluia. He gives us His body for food and refreshes us with His holy blood. Alleluia. Praise the Lord in the heavens. Alleluia. Praise Him all His angels. Alleluia."
Praise Him all His hosts. Alleluia.




Zmar-min yoor da mez ge - ra - goor yev soorp zA - ryoon
Զմար-մին իւր տայ մեզ կե - րա - կուր եւ սուրբ զԱ - րիւն
yoor tso - ghe i mez; a - le - loo - ia.
իւր ցո - ղէ ի մեզ. ա - լէ - լու - իա:
Orh - ne - tsek uz - der i her gins;
Օրհ - նե - ցէ՛ք ըզ - Տէր ի յեր - կինս.


a - le - loo - ia. Orh - ne - tsek
ա - լէ - լու - իա: Օրհ - նե - ցէ՛ք
uz - na a - me-nayn hresh - dagk no - ra;
ըզ - նա ա - մե-նայն հրեշ - տակք նո - րա.
a - le - loo - ia. Orh - ne - tsek
ա - լէ - լու - իա: Օրհ - նե - ցէ՛ք



«Քրիստոս պատարագեալը» կ'երգուի Ս. Հաղորդութեան մատուցումէն առաջ: Ս. Հաղորդութիւնը որպէս խորհուրդ կը տրուի անոնց, որոնք մեղքերէ մաքրուած են ապաշխարութեան եւ խոստովանանքի միջոցաւ: Եկեղեցւոյ հին սովորութեան համաձայն, քրիստոնեաներուն առիթ կ'ընձայուէր իրենց մեղքերը բացայայտօրէն խոստովանելու հաւատացեալներուն առջեւ կամ աւելի վերջ, առանձնապէս՝ հոգեւորականի մօտ: Անձնական խոստովանանքը դեռ կը կատարուի հռովմէական կաթողիկէ եկեղեցւոյ եւ արեւելեան ուղղափառ եկեղեցիներու մէջ, բայց հայկական եկեղեցին կը հետեւի ուրիշ աւանդութեան՝ խմբական խոստովանանք կատարելով: Ոմանք կանոնաւոր կերպով յաճախ խոստովանանք կ'ընդլան, իսկ ուրիշներ, ըստ պարագային, իրենց խիղճերուն վրայ ծանրացող մեղքը մեղմացնելու համար. այդ մեղքը կրնայ գործուած ընդլալ մտածումով, խօսքով կամ արարքով, կամայ կամ ակամայ:

«Աստուած փառաբանուած է: Զոհագործուած Քրիստոսը կը բաշխուի մեր մէջ. ալէլուիա: Իր Մարմինը կու տայ մեզի որպէս կերակուր եւ իր սուրբ Արիւնը կը սրսկէ մեր վրայ. ալէլուիա: Բարեբանեցէ՛ք Տէրը երկինքի մէջ. ալէլուիա: Բարեբանեցէ՛ք զայն իր բոլոր հրեշտակներով. ալէլուիա: Բարեբանեցէ՛ք զայն իր բոլոր երկնային զօրքերով. ալէլուիա»:

Kohanamk Գոհանամք *[Song of Thanksgiving]*

"Kohanamk," a Song of Thanksgiving, concludes the Holy Sacrifice portion of the Liturgy, as the celebrant consumes the remainder of the Sacrament. It acknowledges the faithful's personal relationship with God, established through the Eucharistic Celebration.

"Thank You, Lord, You have given us the food of life. You gave Your own Body and Blood to save the world and give life to our souls."

Like an invocation Գոհութեամբ







«Գոհանամքը» շնորհակալութեան երգ մըն է, որ Պատարագին Գոհաբանութեան բաժինը կը հասցնէ իր լրումին, երբ պատարագիչը կը ճաշակէ Ս. Հաղորդութեան մնացեալ մասը: Այս երգը ցոյց կու տայ հաւատացեալին անձնական յարաբերութիւնը Աստուծոյ հետ՝ հաստատուած Ս. Պատարագի մատուցումով:

«Ո՛վ Տէր, գոհութիւն կու տանք քեզի, որ կերակրեցիր մեզի անմահական քու սեղանէդ, բաժնելով Մարմինդ ու Արիւնդ աշխարհի փրկութեան եւ մեր անձերուն կեանքին համար»:

Yeghitsi Եղիցի *[Psalm of Blessing]*

"Yeghitsi" is the Psalm of Blessing from the last portion of the Liturgy, as recorded in Psalm 113:2. The celebrant takes the Gospel in his hands, bows down three times, kisses the altar, and together with the deacons comes down from the bema into the middle of the church to bless the congregation. The Liturgy ends with the Dismissal, as the celebrant sends forth the worshippers, now spiritually renewed and mentally fulfilled. It is customary for the faithful to receive *mas* (a soft, thin, baked dough) as they leave church. This blessed unleavened bread may be consumed by those who did not receive Communion, or may be taken home to loved ones.

"Let the Lord's name be blessed from this time on forever."





«Եղիցին» Ս. Պատարագի վերջին մասի՝ Արձակումին օրհնութեան Սաղմոսն է: Պատարագիչը կ'առնէ Ս. Աւետարանը իր ձեռքը, Ս. Խորանին առջեւ կը խոնարհի երեք անգամ, կը համբուրէ զայն եւ սարկաւագներու հետ վար կ'իջնէ բեմէն՝ դասին մէջտեղէն, օրհնելու հաւատացեալները: Ս. Պատարագը վերջ կը գտնէ Արձակման աղօթքով եւ հաւատացեալները կը մեկնին հոգեպէս նորոգուած եւ իմացականօրէն բաւարարուած: Արարողութեան աւարտին մաս կը բաշխուի հաւատացեալներուն, որոնք զայն կը ճաշակեն եթէ հաղորդուած չեն, եւ կամ տուն կը տանին՝ բաժնելու իրենց ընտանեկան անդամներուն:

«Տիրոջ անունը հիմա եւ մինչեւ յաւիտեան թո՛ղ բարեբանուի»:

Occasional Songs

Armenian music may be divided into several categories, including sacred, folk, bardic, and composed music. Except for composed music, all others, whether created by an individual or a group, have been handed down orally from generation to generation. As a result, sacred, folk, and bardic songs have been subjected to changes each time they are passed along, each group lending its own special stamp.

Armenian sacred melodies, as described earlier, were notated in a manner both to aid the chanter's memory and allow enough latitude for him to use his imagination.

Folk songs were usually created on the spur of the moment for specific occasions, such as to till the soil, to lull the baby, or to enliven a wedding party. Often, these songs would be forgotten; if particularly memorable, they would be retained and passed on to others. Komitas, and later Romanos Melikian and Mihran Toumajan, collected large numbers of folk songs, preserving a treasure house of national wealth.

Bardic songs were produced by troubadours named *ashoogh*, musicians who earned their living through music. They authored the poems and composed the melodies, while singing and accompanying themselves on an instrument. Fortunately, the *ashoogh* wrote the lyrics down in a notebook, thus ensuring their preservation. The melodies, however, were passed on orally.

In this section, a number of songs by established Armenian composers are presented as a way of introducing significant names in our musical culture. These songs may also be used on certain occasions, such as Vartanantz, Martyrs Day, Culture Month (October), Carnival Day (*Poon paregentan*), Mother's Day, Thanksgiving, and Christmas programs.

Պարագայական Երգեր

Հայկական երաժշտութիւնը կարելի է դասաւորել զանազան խումբերու՝ սըրբազան, ժողովրդային, աշուղական եւ արհեստավարժ: Բացի արհեստավարժէն, մնացեալները՝ ըլլան անոնք անհատի մը կամ խումբի մը կողմէ յօրինուած, բերանացի կը փոխանցուէին անձէ անձ եւ փոփոխութեան կ'ենթարկուէին դարէ դար, իւրաքանչիւր սերունդ դրոշմելով իւրայատուկ կնիքը:

Սրբազան մեղեդիները, ինչպէս նախապէս տեսանք, նշանագրուած են խազագրութեան դրութեամբ, որ թէ՛ երգիչին յիշողութիւնը կը դրդէր եւ թէ՛ անոր երեւակայութիւնը խթանելու ազատութիւն կ'ընծայէր:

Ժողովրդային երգերը ստեղծուած են վայրկեանի ազդեցութեան տակ, որոշ առիթներով՝ հողը մշակելու, երախան քնացնելու կամ հարսանեկան ամոլը ոգեւորելու համար: Շատ անգամ, այս երգերը մոռացութեան կը դատապարտուէին. երբեմն ալ, եթէ յիշատակելի ըլլային, ուրիշներու կը փոխանցուէին: Սկզբնապէս Կոմիտաս, յետոյ ալ Ռոմանոս Մելիքեան եւ Միհրան Թումաճան, բազմաթիւ ժողովրդային երգեր հաւաքեցին, պահպանելով ազգային հարստութեան տապանակ մը:

Աշուղական երգերը յօրինուած են երաժիշտներու կողմէ, որոնք ապրուստ կ'ապահովէին երաժշտութեամբ: Անոնք թէ՛ բանաստեղծութիւնը կը շարադրէին, թէ՛ եղանակները կ'ստեղծէին, միեւնոյն ատեն երգելով եւ ընկերակցելով այս տաղերուն: Բարեբախտաբար, աշուղները երգերու բնագիրները տետրակի մը մէջ կ'արձանագրէին, ապահովելով անոնց պահպանումը: Իսկ եղանակները փոխանցուեցան բերանացի:

Գրքիս վերջին բաժնին մէջ տեղ կուտանք հայ հանրածանօթ երաժիշտներու, ներկայացնելու մեր մշակութային պատմութեան ակնառու դէմքերը: Այս երգերը օգտագործելի են նպատակայարմար առիթներով, ընդ որս Ս. Վարդանանցի տօնը, Նահատակաց օրը, Մշակութային ամիսը, Բուն բարեկենդանը, Մայրերու օրը եւ Ս. Ծննդեան ծրագիրը:

Mer Hayrenik Մեր հայրենիք *[National Anthem]*

A **national anthem** is a country's "signature tune." It is a song performed on official occasions, as well as a hymn that represents the state at international gatherings. The idea of a national anthem originated in 1745 in England. Many countries have created specific compositions for this purpose; others have borrowed existing tunes. The national anthem of the Armenian Republic is based upon a nineteenth century Italian melody, with words adapted to suit the exigencies of the national state. (Curiously, it was an Armenian, K. Nalbandian, who composed the Ethiopian Imperial Anthem, in use until 1975.)

"Our Fatherland, free, independent, / Who has lived throughout centuries. / Your sons are now calling, / Free, independent Armenia. / Behold, brother, a flag for you. / With my hands I sewed it. / For nights I did not sleep, / With my tears I washed it. / Look upon it, tri-colored, our sacred symbol. / Let it wave against the enemy, let Armenia always shine. / In all places death is the same, a man will only die once; / But blessed is he who for his nation's freedom is martyred."





Ազգային քայլերգը երկրի մը ինքնութեան խորհրդանիշն է: Կ'երգուի պաշտօնական առիթներով եւ կը ներկայացնէ պետութիւնը միջազգային հաւաքներու ընթացքին: Ազգային քայլերգի գաղափարը ծնունդ առաւ Անգլիոյ մէջ 1745-ին: Շատ մը երկիրներ իրենց ինքնատիպ քայլերգները ունին, ուրիշներ իւրացուցած են օտար եղանակներ: Հայաստանի հանրապետութեան քայլերգը հիմնուած է անցեալ դարուն յօրինուած իտալական երգի մը վրայ, որուն յարմարցուած են նոր բառեր՝ արտայայտող ազգային գոյավիճակը: (Հետաքրքրական է նշել որ Հայ մը, Գ. Նալպանտեան, յօրինած է Եթովպէական կայսերական քայլերգը, որ գործածութեան մէջ էր մինչեւ 1975:)

«Մեր Հայրենիք, Ազատ, Անկախ, /Որ ապրել է դարէ դար,/ Իւր որդիքը արդ կանչում է/ Ազատ, Անկախ Հայաստան: /Ահա՛, եղբայր, քեզ մի դրօշ,/ Որ իմ ձեռքով գործեցի, /Գիշերները ես քուն չեղայ, /Արտասուքով լուացի: /Նայիր նրան երեք գոյնով, /Խուիրական մեր նշան, /Թո՛ղ փողփողի թշնամու դէմ, /Թո՛ղ միշտ պանծայ Հայաստան: /Ամենայն տեղ մահը մի է, /Մարդ մի անգամ պիտ' մեռնի. /Բայց երանի՜, որ իւր ազգի /Ազատութեան կը զոհուի»:

Kach dohmi zavagner Քաչ տոհմի զաւակներ *[Song of the Brave]*

Tigran Chukhadjian (*b.* Constantinople, 1837; *d.* Smyrna, 1898), is one of the earliest Armenian musicians to engage in Western-style composition. He received his musical education in Milan and was greatly influenced by Italian opera. Popularly known as the "Armenian Verdi," Chukhadjian composed the first Armenian opera, *Arshak II*, in 1868. He established in Constantinople the Knar Musical Society and published periodicals to further Armenian culture. Later, he composed comic operas, including *Leblebidji hor-hor agha* (The Merchant of Roasted Chickpeas), which was staged not only in his native city, but also in Europe, Egypt, and the Caucasus. The choral selection from *Leblebidji* given here is based on an alternate Armenian libretto by Takvor Nalian.

"We are the offspring of a people without fear; / We do not cringe from adversity we meet; / From early childhood, courage we hold dear; / Whatever happens, we won't endure defeat."




Pokr da - ri - ken mishd gu si - renk ka - choo - tyoon,
Փոքր տա - րի - քէն միշտ կը սի - րենք քա - ջու - թիւն,


inch al vor ul - la chenk han - toor - zher bar - doo - tyan.
ինչ ալ որ ըլ - լայ չենք հան - դուր - ժեր պար - տու - թեան:


Pokr da - ri - ken mishd gu si - renk ka - choo - tyoon,
Փոքր տա - րի - քէն միշտ կը սի - րենք քա - ջու - թիւն,



Տիգրան Չուխաճեան (1837, Կ. Պոլիս–1898 Զմիւռնիա) արեւմտեան ոճով յօրինող առաջին հայ երաժիշտներէն էր: Իր ուսումը ստացաւ Միլանոյի մէջ եւ զարգացաւ իտալական երգախաղի անմիջական ազդեցութեան տակ: Չուխաճեան, որ ծանօթ էր ժողովուրդին «Հայոց Վերտին» մակդիրով, յօրինեց առաջին հայկական երգախաղը՝ *Արշակ Բ.–ը* 1868–ին: Ան, ազգային մշակոյթը Կ. Պոլսոյ մէջ տարածելու մտահոգութեամբ, հրատարակեց պարբերաթերթեր եւ հիմնեց Քնար երաժշտական միութիւնը: Հետագային, հեղինակեց զուարճալի երգախաղեր, ներառեալ *Լէպլէպիճի հօր-հօր աղան*, որ բեմադրուեցաւ ոչ միայն իր բնիկ քաղաքին, այլ եւ Եւրոպայի, Եգիպտոսի, Յունաստանի եւ Կովկասի մէջ: Վերեւ տրուած խմբերգային հատուածը *Լէպլէպիճիէն* է եւ հիմնուած՝ Թագուոր Նալեանի փոփոխակ բնագրին վրայ:

«Մենք քաջ տոհմի զաւակներ ենք, չենք վախնար, /Մանր մունր փորձանքներէն չենք փախչիր: /Փոքր տարիքէն միշտ կը սիրենք քաջութիւն, /Ինչ ալ որ ըլլայ չենք հանդուրժեր պարտութեան»:

Lebho, le, le Լէպհօ, լէ, լէ *[Love Song]*

Kristofor Kara-Murza (*b.* Karasupazar, 1853; *d.* Tiflis, 1902) was perhaps the first composer to collect and harmonize Armenian folk songs. He disseminated native melodies by organizing choral groups throughout the Caucasus. Kara-Murza, who helped lay the foundations of Armenian choral culture, is also associated with the development of polyphony born of elements in native melodies. In addition, he was a conductor, critic, and public servant in Tiflis. "Lebho, le, le," a love song, consisting of patter syllables, is among the tunes Kara-Murza collected in Armenian villages.




mp
Ho - ta - lo jan, ho - ta - lo jan, ho - ta - lo,
Հո-դա - լո ճան, հո-դա - լո ճան, հո-դա - լո,
mp
p
ach-ker si - roon ta - ra - lo jan ta - ra - lo,
աչ-քեր սի-րուն դա-րա - լո ճան դա-րա - լո,
p
molto rit.
ach - ker si - roon ta - ra - lo jan ta - ra - lo.
աչ-քեր սի-րուն դա-րա - լո ճան դա-րա - լո:

Քրիստափոր Կարա-Մուրզա (1853, Գարասուբազար - 1902, Թիֆլիս) հաւանաբար տոհմիկ երգերը հաւաքող եւ դաշնաւորող առաջին երաժիշտը եղաւ: Ան Անդրկովկասի մէջ տարածեց այս մեղեդիները շնորհիւ իր կազմակերպած երգչախումբերուն: Կարա-Մուրզա ոչ միայն ծնունդ տուաւ հայկական խմբերգային մշակոյթին, այլ եւ նպաստեց բազմաձայնութեան ոճի մը զարգացման, որուն կորիզը կը կազմէր ժողովրդային երաժշտութեան տարրերը: Բաց աստի, ան խմբավար էր, քննադատ եւ Թիֆլիսի մէջ հաւրային գործիչ: «Լէպհօ, լէ, լէն» սիրային երգ մըն է, փաղաքշական բառերով, զոր Կարա-Մուրզան հաւաքած է իր շրջագայութիւններու ընթացքին:


Der, getso too zHays Տէր, կեցո՛ դու զՀայս *[Hymn of Blessing]*

Makar Ekmalian (*b.* Vagharshapat, 1856; *d.* Tiflis, 1905) is known primarily for his choral setting of the Divine Liturgy, now sung widely in Armenian churches. Ekmalian studied both Armenian liturgical music and Western composition, and later collected and arranged many folk songs. He also gave courses in music theory in Tiflis, where Komitas and Tigranian were among his pupils. "Der, getso too zHays," one of Ekmalian's original compositions, is set to a quasi-religious text by Mesrob Taghiatian.

"Lord, bless our people, / Make their future bright; / Grant them Your love, / Your mercy from above, / That they might live their days, / In Your redeeming grace."




tso too uz- Hays. Zo- ghor- moo- tyoo- nut ve- rin haj-
gn' դու ըզ- Հայս: Ջո- ղոր- մու- թիւ- ընդ վե- րին հաճ-
ya tso- nel no- tsin, zi no- vimp mar- tas- tsook ab- ril
եա՛ ձո- ղել ևո- ցին, զի ևո- վիմբ մար- թաս- ցուք ապ- րիլ
has- dis, has- dis, has- dis, has- dis,
յաս- տիս, յաս- տիս, յաս- տիս, յաս- տիս,



Մակար Եկմալեան (1856, Վաղարշապատ - 1905, Թիֆլիս) քաջածանօթ է իր Պատարագով, որ լայնատարած գործածութիւն ունի մեր եկեղեցիներուն մէջ: Եկմալեան թէ՛ հայկական երաժշտութիւն, թէ՛ արեւմտեան գեղարուեստը ուսանեցաւ, հանգամանօրէն հաւաքելով եւ նօթագրելով բազմաթիւ ժողովրդական երգեր: Դասաւանդեց Թիֆլիսի մէջ, տեսաբանութեան դասեր տալով Կոմիտասի եւ Տիգրանեանի, ի միջ այլոց: «Տէր, կեցո՛ դու զՀայսը» Եկմալեանի ինքնատիպ յօրինումներէն է, հիմնուած՝ Մեսրոպ Թաղիադեանի կրօնաշունչ բանաստեղծութեան վրայ:

«Տէ՛ր, դուն Հայերուս կողքին կեցի՛ր,/ Եւ զիրենք պայծառացուր/ Հայերուս կողքին կեցի՛ր:/ Բարձր ողորմութիւնդ/ Հաճէ՛ անոնց պարգեւել./ Որպէսզի անով կարենանք/ Հոս ապրիլ»:

Ov medzaskanch Ո՞վ մեծասքանչ *[Ode to the Mother Tongue]*

Komitas (*b.* Kutahya, 1869; *d.* Paris, 1935) is the recreator of Armenian music—the deliverer of our national melodic treasure from extinction. At the turn of the century, Komitas, a celibate priest, collected thousands of folk songs while wandering among the Armenian villagers, most of whom shortly thereafter perished during the Genocide. Because of his thorough knowledge of musicology and passionate appreciation of Armenian culture, Komitas was able to weed out elements alien to the Armenian melody, preserving only songs that he considered authentic and unaffected. Komitas' "Ov medzaskanch too lezoo," is based on a text of Nerses Medzboorian.

"How beautiful this language, / Delightful mother tongue! / Could such syllables exist / In other tongues I missed? / Those first sweet accents of / Such soothing words of love; / Repeated, heard by me, / Press on my memory. / Sweet, sweet mother tongue, / Remain forever strong; / Worthy of our forebear Haig, / Full of fragrance, love and song."




nu-man art-yok ayl degh gan? Too, vor nakh ints
ընդ-մաև արդ-եօք այլ տեղ կա՞ն: Դու, որ նախ ինձ
hun-che - tsir, nakh si - ro, voh, heshd khos - ker,
հընձ-չե - ցիր, նախ սի-րոյ, ոհ, հեշտ խօս-քեր,
ayn nakh uz - kez to - to - vels teẽ im mud - ken
այն նախ ըզ-քեզ թո-թո - վելս դեռ իմ մըտ-քէն


ff
che ye- ler. Im may- re- ni kagh-tsur le- zoo,
չէ ե- լեր: Իմ մայ- րե- նի քաղ- ցըր լե- զու,
ff
gyats an - sa - san, gyats ha - ved, gyats mishd le - zoot
կեա՛ց ան - սա - սան, կեա՛ց յա - ւէտ, կեա՛ց միշտ լե - զուդ
hay - gar - jhan, gyats dzagh - ga - lits, dzagh - ga - ved.
հայ - կար - ժան, կեա՛ց ծաղ - կա - լից, ծաղ - կա - ւէտ:

Կոմիտաս (1869, Կուտինա - 1935, Փարիզ) մեր մեղեդային հարստութեան պահպանիչը եւ ազգային երաժշտութեան վերստեղծիչն է: Ձեռնադրուած որպէս կուսակրօն վարդապետ, Կոմիտաս տակաւին աշակերտական տարիներուն սկսաւ շրջիլ գիւղ գիւղ եւ նոյնինքն շինականներու շրթներէն հաւաքել հազարաւոր տոհմիկ երգեր. այսպէս ան փրկեց մեծարժէք ոգեղէն գանձարան մը, որ յաւիտեան կորուստի պիտի դատապարտուէր Մեծ եղեռնի բերմամբ: Ընորհիւ իր երաժշտագէտի լուրջ պատրաստութեան եւ հայկական մշակոյթի հանդէպ իր անպարագիծ սիրոյն, ան յաջողեցաւ բիւրեղացնել ազգային երաժշտութիւնը, տարանջատել մեր երգերէն օտարոտի խորթ տարրերը եւ պահպանել անբասիրը, անաղարտը եւ հայրենիհ: Կոմիտասի «Ո՞վ մեծասքանչ դու լեզու» երգը կ'օգտագործէ Ներսէս Մեծպուրեանի համանուն բանաստեղծութիւնը:

«Ո՞վ մեծասքանչ դու լեզու/ Ո՞վ հեշտ բարբառ մայրական,/ Քաղցրահնչիւն բառերուդ,/ Նման արդեօք այլ տեղ կա՞ն:/ Դու որ նախ ինձ հնչեցիր,/ Նախ սիրոյ, ո՜հ, հեշտ խօսքեր,/ Այն նախ զքեզ թոթովելս/ Դեռ իմ մտքէն չէ ելեր:/ Իմ մայրենի քաղցր լեզու,/ Կեա՛ց անսասան, կեա՛ց յաւէտ,/ Կեա՛ց միշտ լեզուդ հայկարժան,/ Կեա՛ց ծաղկալից, ծաղկաւէտ»:

En ardzivu cher Էն արծիւը չէր *[Song of Valor]*

Alexander Spendiarian (*b.* Khakovka, 1871; *d.* Yerevan, 1928) is the first major Armenian composer to utilize the Western orchestra as a medium to express musical ideas. Although trained as a lawyer, Spendiarian chose to pursue a musical career after studying composition with the Russian composer Rimsky-Korsakov in St. Petersburg. In his later years, Spendiarian settled in Armenia, where he finished his opera *Almast,* a patriotic tale based on a poem by Hovhannes Toomanian. The opera house in Yerevan is named after Spendiarian for his valiant efforts to establish a vital musical life in his native country. "En ardzivu cher" is a choral number from *Almast.*

"Not an eagle that soared in the night, / But our brave Tatool ready to fight; / Weapons and soldiers roaring ahead, / While evil retreated in muffled dread. / Not thunder, not fire, not lightning bolt, / But the valorous Tatool's strike instead; / Without fear of the Shah and all his might, / Nor even of death's most savage assault."




mf
Mer a - ri zor - ki zenkn e sha-ra - choom,
Մեր ա-րի զոր - քի զէնքն է շա-ռա - ջում,
mf
loor oo sar - sa - har charn e na - han - choom.
լուռ ու սար-սա - հար չարն է նա-հան - չում:
f
Shant oo hoor cher en,
Շանթ ու հուր չէր են,
f


en vo-rod cher khool, en zar-goom er zor ka-chun mer Ta - tool.
էն ո-րոտ չէր խուլ, էն զար-կում էր զոր քա-ջըն մեր Թա-թուլ:
mf
Ah choo-ni yer - pek na hu-zor sha - hits
Ահ չու-նի եր - բեք ձա հը-զօր շա - հից
mf
cresc.
ah choo-ni an - kam na ta - jhan, char ma -
ահ չու-նի ան - գամ ձա դա - ժան, չար մա -
cresc.



Ականաւոր հայ երաժիշտ **Աղեքսանդր Սպենդիարեան** (1871, Խաքովքա - 1928, Երեւան) իր երաժշտեան միտքն ու յոյզերը արտայայտեց արեւմտեան կազմութեամբ նուագախումբի միջոցաւ: Թէեւ որպէս փաստաբան պատրաստուած էր ան, Փէթերսպուրկի մէջ ուսս յօրինող Ռիմսքի-Քորսաքովի հետ երաժշտութիւն ուսանելէ վերջ որոշեց իր ասպարէզը փոխել: Իր կեանքի վերջին տարիներուն, հաստատուեցաւ Հայաստանի մէջ, ուր աւարտեց *Ալմաստ* անունով իր երգախաղը, հիմնուած՝ Թումանեանի հայրենասիրական շունչով երկին վրայ: Երեւանի օբերայի շէնքը Սպենդիարեան անունը կը կրէ, ի պատիւ անոր երկրին մէջ երաժշտական եռանդուն կեանք մը ստեղծելու համար տարած բուռն ջանքերուն: «Էն արծիւը չէր» խմբերգային հատուածը Սպենդիարեանի *Ալմաստ* երգախաղէն է:

«Անիկա արծիւը չէ որ մութին կը թռչի,/ Մեր քաջ Թաթուլն է որ դուրսն է կոտելու:/ Մեր քաջ բանակին զէնքերը կը շառաչեն,/ Ձարը՝ վախցած եւ լուռ, ետ կը քաշուի:/ Կայծակ ու կրակ չէ եւ ոչ ալ որոտում,/ Անիկա մեր քաջ Թաթուլին հանած ձայնն է:/ Ան վախ չունի զօրաւոր շահէն/ Եւ ոչ ալ վախ ունի գէշ ու չար մարդոցմէն»:

Ambi dagitz Ամպի տակից *[Song of Lament]*

Armen Tigranian (*b.* Alexandropol, 1879; *d.* Tiflis, 1950) is the founder of an Armenian national operatic style. In his two operas, *Anoosh* and *Davit-Bek*, Tigranian developed an idiom akin to folk songs and created a significant role for the chorus as dramatic commentator. He lived mostly in Tiflis, serving as a choirmaster, a teacher, and manager of the local Armenian Music Society. "Ambi dagitz," is a choral selection from *Anoosh*, based on a text by Hovhannes Toomanian.

"Water streams from the clouds above, / Foaming and bubbling and tumbling down; / Whose sweetheart is it huddled there, / Weeping her heart out in despair?





Արմէն Տիգրանեան (1879, Աղեքսանտրապոլ - 1950, Թիֆլիս) հիմնադիրն է ազգային ոճով հայկական երգախաղին: Իր երկու օբերաներուն մէջ *Անուշի* եւ *Դաւիթ-Պէկի*, ան ստեղծեց ժողովրդական երգի գոյնով լեզու մը եւ երգչախումբին տուաւ թատերական տեսանկիւնէ կենսական դեր մը: Ապրեցաւ գլխաւորաբար Թիֆլիսի մէջ եւ հոն գործեց որպէս խմբավար, դաստիարակ եւ տնօրէնը՝ Հայկական երաժշտութեան ընկերութեան: «Ամպի տակիցը», *Անուշէն* երգչախմբային հատուած մըն է, հիմնուած Թումանեանի բնագրին վրայ:

«Ամպի տակից ջուր է գալի,/ Դօշ է տալի, փրփրում,/ Էն ո՞ւմ եարն է նստած լալի,/ Հօնգուր-հօնգուր էն սարում»:

Oror Որոր *[Lullaby]*

Parsegh Ganachian (*b.* Trabzon, 1885; *d.* Beirut, 1967) is one of Komitas' "five disciples." Ganachian met and studied with his mentor in Constantinople, where he spent most of his youth. Like his teacher, Ganachian composed mostly vocal music, producing a number of large-scale compositions, including *Nanor*. From 1933 on, he lived in Beirut where he formed a choral group, Koosan, named after Komitas' own vocal ensemble. "Oror," a cherished song by Ganachian, was inspired by a text of the Armenian poet Kamar Katiba.

"Close your eyes, my child, and sleep; / May your slumber be tender and deep. / Lullaby, my sweet one, have no fear; / My dear child nods, to sleep so near. / Sleep, child, and share your sleep with me; / Dear Mother of God, let slumber be."




o - ror, im ba - las,
o - ror oo na - ni,
o - ror, im a - noo - shi - gis
koo - nu gu da - ni,
o - ror, im a - noo - shi - gis
koo - nu gu da - ni.

Բարսեղ Կանաչեան (1885, Ռոտոսդօ -1967, Պէյրութ) Կոմիտասի հինգ սաներէն էր: Ան ծանօթացաւ եւ ուսանեցաւ Վարդապետին հետ Կ. Պոլսոյ մէջ, ուր ապրեցաւ երիտասարդութեան տարիները: Իր ուսուցչին նման, Կանաչեան ալ յօրինեց մեծամասնաբար ձայնային գործեր, արտադրելով լայն ծաւալով ստեղծագործութիւններ, ինչպէս *Նանօրը:* 1933-ին տեղափոխուեցաւ Պէյրութ, ուր հիմնեց Գուսան երգչախումբը, հետեւողութեամբ Կոմիտասի հանգուն խումբին: «Օրօր» խորագրով Կանաչեանի գողտրիկ երգը ներշնչուած է հայ բանաստեղծ Գամառ Գաթիպայի տաղերէն:

«Քուն եղի՛ր, բալաս, աչերդ խուփ արա՛, /Նախշուն աչերուդ քուն թո՛ղ գայ վրայ. /Օրօր, իմ բալաս, օրօր ու նանի, /Իմ անուշիկիս քունը կը տանի»:

Seghani yerk Սեղանի երգ *[Festival song]*

Aram Khachaturian (*b.* Tiflis, 1903; *d.* Moscow, 1978) is the Armenian ambassador to the musical world at large. Universally known for his "Sabre Dance" from the ballet *Gayaneh*, Khachaturian was a late bloomer as a musician and a composer. Blessed with a distinct individual style, recognizable at once, he employed elements of Armenian music as a point of departure for his unique compositional idiom. His scores are full of rhapsodic melodies, surging rhythms, and sharply expressive harmonies. Above all, his music is brilliantly colorful. Khachaturian has set to music only a few Armenian poems; however, "Seghani yerk," set to a text by Ashot Grashi, is loved by all.

"Let us praise, my friend, / With joyous music, / The red wine of Armenia; / Let us drink, my friend, / With a golden cup, / The red wine of Armenia. / Abundant as a gushing fountain, / The red wine of Armenia. / May it be sweet for all who taste it, / The red wine of Armenia. / Let us adorn the mountains and valleys, / With vineyands green and red, / And fill the barrels to the top, / With the red wine of Armenia."




mf
Ko - venk un - ger, oo - rakh
Գո - վենք ըն - կեր, ու - րախ
mf
sa - zov Ha-yas - da - ni gar - mir ki - nin,
սա - զով Հա-յաս - տա - նի կար - միր գի - նին,
mf
Khu - menk un - ger vos - ge ta - sov Ha - yas -
Խը - մենք ըն - կեր ոս - կէ թա - սով Հա - յաս -
mf


da - ni gar - mir ki - nin. Agh-pyoo - ri bes
տա - նի կար - միր գի - նիս: Աղ - բիւ - րի պէս
va - rar li - ni Ha - yas - da - ni gar - mir
վա - րար լի - նի Հա - յաս - տա - նի կար - միր
ki - nin, ov vor khu - mi a - noosh li - ni
գի - նիս, Ով որ խը - մի ա - նուշ լի - նի
poco marcato



Արամ Խաչատրեան (1903, Թիֆլիս - 1978, Մոսկուա) հայկական երաժշտութեան դեսպանն է ի սփիւռս աշխարհի: Քաջածանօթ իր «Սուրերու պարով», ան ուշ ծաղկեցաւ որպէս երաժիշտ եւ յօրինող: Խաչատրեան, որուն երաժշտական ոճը ակնթարթի մէջ ճանաչելի է, հայկական երաժշտութեան որոշ տարրերը կ'օգտագործէ որպէս մեկնակէտ, կերտելու համար իր եզակի բանաձեւը: Անոր գործերը կ'արտացոլեն վիպաշունչ մեղեդիներ, ցայտուն կշռոյթներ եւ խիստ արտայայտիչ դաշնակումներ: Ամէն բանէ վեր, իր երաժշտութիւնը գերազանցօրէն գունագեղ է: Խաչատրեան հայերէնով գրուած հազիւ քանի մը ոտանաւորներ երաժշտականացուցած է, որոնցմէ մին է Աշոտ Գրաշիի բնագրով յօրինուած «Սեղանի երգը»:

«Գովենք ընկեր, ուրախ սազով/ Հայաստանի կարմիր գինին,/ Խմենք ընկեր, ոսկէ թասով/ Հայաստանի կարմիր գինին:/ Աղբիւրի պէս վարար լինի/ Հայաստանի կարմիր գինին,/ Ով որ խմի անուշ լինի/ Հայաստանի կարմիր գինին»:

Dle, dle Տլէ, տլէ *[Folk Tune]*

Alan Hovhaness (*b.* Watertown, MA, 1911) is a spiritual descendant of Komitas. Like Komitas, Hovhaness also appreciates the true nature of Armenian music, and adheres to the aesthetic principles governing its artistic expression. In fact, Hovhaness is a mystic who transcends the immediate impact of music, searching more for its metaphysical significance. A prolific composer, he combines Western techniques with Middle Eastern and Asian philosophies, creating a musical language at once spiritual and worldly. The melody of "Dle, dle" is from the Van district of historic Armenia with a text consisting of patter syllables.




man, dul ya - man.
մաՆ, տՂլ եա - մաՆ:
Du - le, du - le, dul ya -
ՏՂ - լէ, տՂ - լէ, տՂլ եա -
man, du - le, du - le,
մաՆ, տՂ - լէ, տՂ - լէ,


dul ya - man, du - le, du - le,
տըլ եա - ման, տը - լէ, տը - լէ,
dul ya - man, du - le, du - le,
տըլ եա - ման, տը - լէ, տը - լէ,
dul ya - man.
տըլ եա - ման:

Ալան Յովհաննէս (ծն. 1911, Ուաթըրթաուն) Կոմիտասի հոգեւոր շառաւիղն է: Կոմիտասի նման, ան ալ ըմբռնած է հայկական երաժշտութեան իսկական բնոյթը, փարելով գեղագիտական սկզբունքներու, որոնք մղում կու տան արուեստի բնագաւառին մէջ տոհմիկ արտայայտութիւններու յղացումին: Արդարեւ Յովհաննէս խորհրդապաշտ մըն է, որ կը համբառնայ երաժշտութեան անմիջական ներգործութենէն, ու կապ կը կապէ անոր վերացական իմաստին հետ: Այս բեղուն յօրինողը կը կերտէ երաժշտական բարբառ մը՝ միաժամանակ հոգեկան թէ աշխարհիկ, որ ծնունդ կ'առնէ արեւմտեան կերպագիտութեան եւ արեւելեան փիլիսոփայութեան համադրութենէն: «Տլէ, տլէ» մեղեդին պատմական Հայաստանի Վանի շրջանէն է, որուն բառերը փաղաքշական բնոյթ ունին:

Togh hnchen Թող հնչեն *[Song of Faith]*

Ashod Ashekian (*b.* 1953, Leninakan), an eloquent preacher and activist in religious education in Armenia, has composed numerous songs, disseminating them through personal appearances, recordings, and publications. Based on Biblical stories and events in the life of Christ, his songs, including the following "Togh hnchen," have a popular Western sound combined with Armenian lyrics and sensibilities.

"Let the bells ring the news, / Let the bells ring the news, / The good news. / Today is a joyous day, / The day the Messiah was born, / A day of good news, good news. / With His Cross He saves, / Releasing Evil's embrace; / He is the Savior of the world."




Ay - sor don e khun - too - tyan, zi dzu -
Այ - սօր տօն է խղճ - դու - թեան, զի ծը -
nav Hi - soos Mes - ian; pa - ri loor e, pa - ri
նաւ Յի - սուս Մես - իան. բա - րի լուր է, բա - րի
loor e, pa - ri loor. Ir kha -
լուր է, բա - րի լուր: Իր խա -



Աշոտ Աշըքեան (ծն. 1953, Լենինական) Հայաստանի մէջ պերճախօս քարոզիչ եւ կրօնական դաստիարակութեան գործիչ մըն է: Գրած է բազմաթիւ երգեր, զորս կը տարածէ ելոյթներու, ձայնապնակներու եւ հրատարակութիւններու միջոցաւ: Իր երկերը կ'արձագանքեն Ս. Գրական պատմութիւններ եւ Քրիստոսի կեանքէն եղելութիւններ: «Թո՛ղ հնչեն» երգին նման, անոնք կը միացնեն արեւմտեան հասարակական երաժշտութեան շունչը ու հայկական ժողովրդական զգայնութիւնը՝ արտայայտուած մեր ոսկեղնիկ լեզուով:

«Թո՛ղ հնչեն զանգերն ի լուռ,/ Թո՛ղ հնչեն զանգերն ի լուռ,/ Բարի լուր է, բարի լուր է, բարի լուր:/ Այսօր տօն է խնդութեան/ Ջի ծնաւ Յիսուս Մեսիան./ Բարի լուր է, բարի լուր է, բարի լուր:/ Իր խաչով քեզ կը փրկի, չարի ձեռքից կ'ազատի,/ Փրկիչն է նա, օծեալ Փրկիչն աշխարհի»:

Bibliography

Apcar, Amy. *Melodies of the Holy Apostolic Church of Armenia.* 2nd ed. 2 vols. Calcutta, 1920.

Aprahamian, Isahag, and Bohcali, Ara, compl. *Solemn Divine Liturgy of the Armenian Church by Gomidas Vartabed.* New York: By the Compilers, 1968.

Ashjian, Mesrob, Abp. *The Great Week in the Armenian Tradition.* 2nd ed. New York: Prelacy of the Armenian Apostolic Church, 1986.

Bedrossian, Garo. *Hayasdanyayts yegeghetsvo doner yev azkayin avantootyoonner.* ["Feasts of the Armenian Church and National Customs."] Reseda, CA: By the Author, 19621 Gifford St., 1993.

Bianchini, Pietro. *Les chants liturgiques de l'eglise arménienne.* Venice: S. Lazzaro, 1877.

Bogharian, Norayr, Abp. *Dzisakidootyoon.* ["Study of Ritual."] New York: St. Vartan, 1990.

Ceremony of the Washing of the Feet. Cheltenham, PA: Holy Trinity Armenian Church, 1976. (Mimeographed.)

Chilingirian, L.M. *Yeřatsayn yerketsogootyoon s. Badaraki.* ["Three-part Setting of the Divine Liturgy."] Jerusalem, 1931.

Cross, F.L. and Livingstone, E.A., ed. *The Oxford Dictionary of the Christian Church.* Oxford: Oxford University Press, 1974.

Daïan, Léonce, Fr. *Sharagan hayasdanyats yegeghetsvo* ["Canonical Hymns of the Armenian Church."] 5 vols. Venice: S. Lazzaro, 1957.

Davis, J.G., ed. *The Westminster Dictionary of Worship.* Philadelphia: The Westminster Press, 1972.

Dndesian, Yeghia. *Sharagan tsaynakryal.* ["Canonical Hymns in Notation."] 5 vols. Istanbul: Merkez, 1934.

Doyle, James, Fr. *Sharagan: The Liturgical Canons of Armenian Apostolic Orthodox Church.* (Typewritten.)

Ekmalian, Makar. Srpazan yerketsoghootyoonk. ["Sacred Vocal Music."] 2 Vols. New York: Association of Armenian Church Choirs of America, 1994.

Gulesserian, Papken, Catholicos of Celicia. [Collection of Sermons, title unavailable.] Beirut: Antilias, 1936.

Hagopian, Krikor A. *Sharaganneri jhanřu hay michnataryan kraganootyan mech.*["The Genre of Canonical Hymns in Medieval Armenian Literature."] Yerevan: Armenian SSR Academy of Sciences,1980.

Hay badanoo sharagnotsu. ["The Book of Canonical Hymns for the Armenian Youth."] New Julfa: Monastery of St. Amenaprgich, 1977.

Haygagan sovedagan hanrakidaran. ["Soviet Armenian Encyclopedia."] 12 vols. + supp. Yerevan: Armenian SSR Academy of Sciences, 1974-87.

Jhamakirk. ["Book of Hours."] Jerusalem: St. James, 1955.

Kalsdian, Masis, Fr., transcriber. *Abashkharootyan sharaganner.* ["Canonical Hymns of Penance."] Yerevan: St. Etchmiadzin, 1986.

Kalsdian, Masis, Fr., transcriber. *Asdvadzadzni yev dznntyan sharaganner.* ["Canonical Hymns of Assumption and Christmas."] Yerevan: St. Etchmiadzin, 1986.

Khoran looso: Sharagan. ["Altar of Light: Canonical Hymn."] Yerevan: St. Sarkis Church, 1991.

Khoran looso: Yerk arevakali. ["Altar of Light: Songs of the Sunrise Office."] Yerevan: St. Sarkis Church, 1993.

Komitas, Rev. *Kařatsayn yerketsoghootyoonk srpo Badaraki.* ["Four-part Setting of the Divine Liturgy."] Istanbul: Üniversum, 1945.

Khyoodaverdyan, Nerses. *Arevakal.* ["Sunrise Office."] Constantinople, 1929.

Nersoyan, Hagop. *A History of the Armenian Church.* New York: Delphic, 1963.

Nersoyan, Tiran, Abp. *Divine Liturgy of the Armenian Apostolic Orthodox Church.* London: St. Sarkis Church, 1984.

Ormanian, Maghakia, Patriarch of Constantinople. *Dzisagan pařaran.* ["Dictionary of the Ritual."] 2nd ed. Beirut: Antilias, 1957.

Ormanian, Maghakia, Patriarch of Constantinople. *Azkabadoom.* ["National History."] 3 vols. 2nd ed. Beirut: Sevan, 1959.

Outtier, Dom Bernard. *Recherches sur la genèse de l'octoéchos arménien.* Vol XIV of *Etudes grégoriennes.* Paris: Abbaye Saint-Pierre de Solesmes, 1973.

Sacred Music of the Armenian Church. 2 vols. New York: Diocese of the Church of America, 1966.

Sarafian, Jorge. *Armenia a traves de sus cantares.* Buenos Aires: By the Author, Av. los Incas 3444, 1991.

Shalian, Harootyoon. *Hay yegeghetsvo sharaganner yev yerker.* ["The Canonical Hymns and Chants of the Armenian Church."] New York: Delphic, 1934.

Sharagan. ["Book of Canonical Hymns."] New York: St. Vartan, 1984.

Sharagank yev yerkk i jhamakrots. ["Canonical Hymns and Chants in the Book of Hours."] New York: Diocese of the Armenian Church of America, 1940.

Sunrise Office of the Armenian Church. Jerusalem: St. James, 1957.

Tahmizian, Nigoghayos. *Nerses Shnorhalin: Yerkahan yev yerajhishd.* ["Nerses Shnorhali: Composer and Musician."] Yerevan: Armenian SSR Academy of Sciences, 1973.

Tahmizian, Nigoghayos, ed. *Vosgeporig: Hay yerki koharner.* ["Treasury of Armenian Songs."] Yerevan: Sovedagan krogh, 1982.

Yerketsoghootyoonk soorp badaraki — Miatsayn. ["Melodies of the Divine Liturgy—Monophonic."] Istanbul: Merkez, 1936.

Şahan Arzruni enjoys an international reputation as a concert pianist, ethnomusicologist, writer, and lecturer. Beginning with his teenage years, when he published a music textbook for elementary schools in his native Istanbul, Şahan Arzruni has exhibited an unabated interest in education--publishing, producing and broadcasting material suitable for young musicians. An ardent explorer of his Armenian roots, Şahan Arzruni researches his native culture and introduces the music of Armenian composers to world audiences. He lives in New York City.

Շահան Արծրունի միջազգային համբաւ կը վայելէ, որպէս դաշնակահար, հեղինակ, բանախօս եւ տոհմիկ երաժշտութեան մասնագէտ: Իր պատանեկութեան տարիներուն Իսթանպուլի հայկական նախակրթարաններուն համար գրած երաժշտութեան դասագրքին տպագրութենէն ասդին, ան բուռն շահագրգռութիւն ցուցաբերած է արուեստից ուսման հանդէպ, հրատարակելով եւ հրապարակելով տղոց դիւրամատչելի մշակութային նիւթեր: Հայրենի ժառանգին նախանձախնդիր արուեստագէտը շարունակ կը հետազօտէ ազգային երաժշտութեան արմատները, իր աշխատանքը տարածելով աշխարհի չորս ծագերը՝ համերգներու եւ դասախօսութիւններու միջոցաւ: Շահան Արծրունի բնակութիւն կը հաստատէ Նիւ Եորք քաղաքին մէջ: